

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ  
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ  
2005Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի ՀԱՆՐԱՔԿԵԻ  
ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ**



ԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՆՈՒԹՅԱՆ  
ՄԻՆԻՍՏԵՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԿԱՆ



ՄԱՐԿԵԿԱՆԱԿՈՒԹՅԱՆ  
ՄԻՆԻՍՏԵՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԿԱՆ



ՄԱՐԿԵԿԱՆԱԿՈՒԹՅԱՆ  
ՄԻՆԻՍՏԵՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԿԱՆ

ԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՆՈՒԹՅԱՆ  
ՄԻՆԻՍՏԵՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԿԱՆ 2005



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԼՍ-ՆԵՐՈՒՄ ԶՅ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ 2005Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի  
ՀԱՆՐԱՔԿԵԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՍՈՆԻՏՈՐԻՆԳԻ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

**I. ՀԱՆՐԱՔԿԵԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**

«Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը եւ այլ օրենքներ ԶԼՍ-ների իրավունքներին եւ պարտականություններին նվիրված դրույթներում, Երեւանի մամուլի ակումբի կատարած ուսումնասիրության համաձայն, հանրաքվեի ընթացքում զանգվածային լրատվության միջոցներով տարբեր տեսակետների քարոզչություն իրականացնելու համար հավասար եթերաժամանակ եւ թերթային տարածք տրամադրելու բավարար պայմաններ չեն ապահովվում:

«Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքում միայն նշվում է (հոդված 20)՝ «Պետությունը երաշխավորում է հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ ֆարոզչության ազատ իրականացումը», ապա եւ՝ «Քարոզչությունը կարող է կատարվել զանգվածային լրատվության միջոցներով, հրատարակային ֆարոզչական միջոցառումների ձեւով (ժողովներ, հանդիպումներ, հրատարակային ֆունկցիաներ, բանավեճեր, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր), տղազիր նյութեր հրատարակելու, ծայնագրված եւ նկարահանված նյութեր տարածելու միջոցով»: Սակայն այս դրույթների իրականացման մեխանիզմներ օրենքը, ի տարբերություն ՀՀ Ընտրական օրենսգրքի, չի նախատեսում:

Վճարովի քարոզչությանն անդրադառնում է միայն «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը, որի վերջին պարբերությունն ասում է. «Հանրաքվեների և ընտրությունների ֆարոզչության ժամանակաշրջանում հեռուստառադիոընկերությունները հրատարակավ հայտնում են վճարովի ֆաղափական գովազդի ու ֆարոզչական այլ հաղորդումների՝ իրենց եթերաժամի արժեքը: Ցանկացողները վճարովի եթերաժամից օգտվում են տայնանագրային կարգով եւ հավասար տայնաններով»:

ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի հանրաքվեի քարոզչության ընթացքը ցույց տվեց, որ Հայաստանի հեռուստառադիոընկերությունները չեն կատարել օրենքի այս պահանջը, հանրաքվեի դրված հարցի քարոզչության համար վճարովի եթերաժամի սակագներ չեն հայտարարել: ԵՄԱ-ի դիտարկած հեռուստաընկերություններն ընդհանրապես վճարովի եթերաժամ չեն տրամադրել:

«Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետում նշվում է. «Քարոզչություն կատարելու իրավունք ունեցող անձինք կարող են սեղծել ֆարոզչության հիմնադրամ՝ ֆարոզչությունը ֆինանսավորելու նպատակով»: Նույն հոդվածի 2-րդ կետում նշվում է՝ «Հիմնադրամի միջոցները հավաքվում են ֆարոզչության իրավունք ունեցող անձի սված գրավոր դիմումի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում բացված հատուկ հաշվում»: Իսկ նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ «Արգելվում է ֆարոզչության ընթացքում հիմնադրամից դուրս միջոցներ ծախսելը»:

Հատուկ հաշիվներում գումարների քիչ կուտակումն ու ծախսումը նաեւ նրանով է բացատրվում, որ լրատվամիջոցները վճարովի քարոզչության հնարավորություն չէին տալիս:

## II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի ՁԼՍ-ներում ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեի լուսաբանման մոնիտորինգը երեւանի մամուլի ակումբն անց է կացրել 2005 թվականի նոյեմբերի 5-ից 25-ը, Բաց հասարակության ինստիտուտի մարդու իրավունքների եւ կառավարման դրամաշնորհների ծրագրի օժանդակությամբ իրականացվող «Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների մոնիտորինգ» ԵՄԱ-ի նախագծի շրջանակներում:

### ***Մոնիտորինգի խումբը.***

ծրագրի տնօրեն՝ **Բորիս Նավասարդյան,**  
համակարգող - խմբագիր՝ **Էլինա Պողոսբեկյան,**  
խորհրդականներ՝ **Վարդան Պողոսյան, Մեսրոպ Հարությունյան,**  
դիտարկողներ՝ **Արմինե Սուքիասյան, Սեդա Շիգանյան, Արմեն Նիկողոսյան, Սաթենիկ Դաբադյան:**

***Մոնիտորինգի նմասակն էր՝*** քանակական տվյալների ստացման եւ վերլուծության միջոցով պարզել.

- ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի՝ 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեի նկատմամբ Հայաստանի ՁԼՍ-ների ուշադրության աստիճանը,

- հասարակությանը նոյեմբերի 27-ի հանրաքվեի, սահմանադրական բարեփոխումների գործընթացի եւ բովանդակության մասին ադեկվատ տեղեկություններ մատուցելու աստիճանը:

### ***Մոնիտորինգն ընդգրկել է.***

**4 համազգային հեռուստարձկերություն.** Հայաստանի հանրային հեռուստատեսությունը (Հ1), ԱԼՍ-ը, «Արմենիան», Հայկական երկրորդ հեռուստաալիքը (Հ2), որոնք հեռարձակվում են Հայաստանի ողջ տարածքում կամ դրա նշանակալի մասում:

**7 համազգային թերթ.** պաշտոնական՝ «Հայաստանի Հանրապետությունը» (օրաթերթ) եւ «Ռեսպուբլիկա Արմենիան», ինչպես նաեւ՝ «Ազգ», «Առավոտ», «Հայկական ժամանակ», «Հայոց աշխարհ» օրաթերթերն ու ռուսալեզու «Գոլոս Արմենիին»:

*(Հետազոտված ՁԼՍ-ների ցանկն ու համառոտ բնութագրերը՝ ստորել):*

**Մոնիտորինգի առարկա էին** թերթային բոլոր այն հրապարակումները, վերոհիշյալ հեռուստաընկերությունների հիմնական լրատվական թողարկումները, այն լրատվական-վերլուծական ծրագրերը եւ մեկնաբանական հաղորդումները, որոնցում առկա էր 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեի, Սահմանադրության փոփոխությունների նախագծի մասին ցանկացած հիշատակում:

### **III. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՄԵԹՈԴԱԼՈԳԻԱՆ**

Մոնիտորինգի մեթոդալոգիան տարբեր էր՝ կախված լրատվամիջոցների տեսակից:

#### **1.ՅԵՌՈՒՄՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՄԵԹՈԴԱԼՈԳԻԱՆ**

Յեռուստաընկերությունների մոնիտորինգի մեթոդալոգիան, իր հերթին, տարբեր տեսակի ծրագրերի/հաղորդումների (լրատվական/լրատվական-վերլուծական, մեկնաբանական) համար տարբեր էր:

#### **Ա. ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ-ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ**

**Լրատվական եւ լրատվական - վերլուծական ծրագրերի հեսազոսության մեթոդալոգիան ներառում էր.**

- Յեռուստաընկերության յուրաքանչյուր լրատվական ծրագրի հիմնական թողարկման, յուրաքանչյուր լրատվական-վերլուծական ծրագրի ընդհանուր ժամանակային տեւողության հաշվարկը (վայրկյաններով), բացառությամբ եղանակի տեսության, քաղաքական եւ առեւտրային գովազդի, այդ թվում՝ հայտարարությունների, հեռուստածրագրերի ծանուցման եւ այլն:

- Յեռուստաընկերության յուրաքանչյուր լրատվական ծրագրի հիմնական թողարկման, յուրաքանչյուր լրատվական-վերլուծական ծրագրի հեռուստանյութերի ընդհանուր քանակի հաշվարկը (բացարձակ թվերով)՝ բացառությամբ եղանակի տեսության, քաղաքական եւ առեւտրային գովազդի, այդ թվում՝ հայտարարությունների, հեռուստածրագրերի ծանուցման եւ այլն:

**Յեռուստանյութ էր համարվում.**

Եթերի թեմատիկորեն, կառուցվածքով եւ ձեւավորմամբ առանձնացված միավորը, այսինքն՝

**ա)** լրատվական ծրագրի առանձին սյուժեն,

**բ)** հաղորդավարական տեքստով մատուցված առանձին տեղեկատվությունը,

**գ)** հաղորդման թեմատիկորեն առանձնացված մասը (բաժինը, սյուժեն), որը վերաբերում էր հաղորդման մյուս մասերից տարբեր թեմայի կամ խնդրի,

**դ)** հեռուստահարցազրույցում թեմատիկորեն առանձնացված հարցը եւ դրա պատասխանը, որը վերաբերում էր մյուս հարցերից ու պատասխաններից տարբեր թեմայի կամ խնդրի,

**ե)** հաղորդումը կամ հարցազրույցը, որում շոշափվում էր մեկ թեմա կամ խնդիր, չէր մասնատվում եւ դիտարկվում էր իբրեւ մեկ նյութ,

**զ)** սյուժեների ծանուցումները դիտարկվում էին իբրեւ այն նյութի մաս, որին վերաբերում էին,

**է)** սյուժեին (ռեպորտաժին եւ այլն) նախորդող վերնագիրը, ենթավերնագիրը, լիդը, հաղորդավարական տեքստը, դիտարկվում էին իբրեւ այդ սյուժեի (ռեպորտաժի եւ այլն) մաս:

- Հեռուստաընկերության յուրաքանչյուր լրատվական ծրագրի հիմնական թողարկման, լրատվական-վերլուծական ծրագրի հեռուստանյութերում 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեի, Սահմանադրության փոփոխությունների նախագծի մասին հիշատակումների ընդհանուր քանակի (բացարձակ թվերով) հաշվարկը: Յուրաքանչյուր մեկ հեռուստանյութում արձանագրվում էր մոնիտորինգի թեմայի միայն մեկ հիշատակում:

- Հեռուստաընկերության յուրաքանչյուր լրատվական ծրագրի հիմնական թողարկման, լրատվական-վերլուծական ծրագրի հեռուստանյութերում 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեի, Սահմանադրության փոփոխությունների նախագծի մասին հիշատակումների ընդհանուր ժամանակային տեւողության հաշվարկը (վայրկյաններով):

- Հեռուստաընկերության յուրաքանչյուր լրատվական ծրագրի հիմնական թողարկման, լրատվական-վերլուծական ծրագրի հեռուստանյութերում 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեի, Սահմանադրության փոփոխությունների նախագծի մասին դրական, բացասական եւ չեզոք հիշատակումների ընդհանուր քանակի (բացարձակ թվերով) հաշվարկը: Յուրաքանչյուր մեկ հեռուստանյութում արձանագրվում էր մոնիտորինգի թեմայի հիշատակման միայն մեկ նշան:

Նշանային (դրական, բացասական) հիշատակումներ էին համարվում նրանք, որոնք լսարանի վրա քննարկվող թեմայի վերաբերյալ միանշանակ դրական կամ բացասական (այսինքն՝ Սահմանադրության փոփոխությունների նախագծին կողմ կամ դեմ) տպավորություն էին թողնում: Այն դեպքում, երբ նման միանշանակություն չկար, հիշատակումը արձանագրվում էր իբրեւ չեզոք: Դիտարկողի բոլոր կասկածները նույնպես մեկնաբանվում էին հոգուտ հիշատակումը չեզոք արձանագրելու *(այս սկզբունքը գործում էր նաեւ մեկնաբանական հաղորդումները եւ թերթային հրատարակումներն ուսումնասիրելիս)*:

- Հեռուստաընկերության յուրաքանչյուր լրատվական ծրագրի հիմնական թողարկման, լրատվական-վերլուծական ծրագրի յուրաքանչյուր հեռուստանյութում սահմանադրական բարեփոխումներին անմիջականորեն վերաբերող թեմաների արձանագրում (բացարձակ թվերով):

## **Սահմանադրական բարեփոխումներին առնչվող թեմաների ցանկը**

1. Մարդու եւ քաղաքացու իրավունքներ ու ազատություններ
2. ՀՀ նախագահի լիազորություններ
3. ՀՀ Ազգային ժողովի լիազորություններ
4. ՀՀ կառավարության իրավասություններ եւ լիազորություններ
5. ՀՀ դատական իշխանության անկախություն
6. ՀՀ դատախազության կարգավիճակ եւ իրավասություններ
7. Տեղական ինքնակառավարում
8. Համայնքի ղեկավարի պաշտոնանկության խնդիրը
9. Երեւանի կարգավիճակը
10. Տեղեկատվության եւ խոսքի ազատության բնագավառ
11. Երկքաղաքացիություն
12. Ընտրական իրավունք եւ հանրաքվեներ
13. Սահմանադրական կարգի հիմունքներ եւ այլ ընդհանուր հարցեր
14. Նոյեմբերի 27-ի հանրաքվեի կազմակերպմանն ու անցկացմանն առնչվող հարցեր

Վերոհիշյալ թեմաները որոշվել են փորձագիտական մակարդակով: Առանձնացվել են 2005 թվականի նոյեմբերի 27-ին հանրաքվեի դրված ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի 12 հիմնական թեմատիկ բաժինները (1-12 կետեր): Դրանց ավելացվել են եւս երկուսը (13 եւ 14): Ընդամին, 13-րդ կետում («Սահմանադրական կարգի հիմունքները եւ այլ ընդհանուր հարցեր») արձանագրվում էին 1-12 կետերում չընդգրկված, սակայն սահմանադրական բարեփոխումներին առնչվող թեմաները, իսկ 14-րդ կետում՝ հանրաքվեի կազմակերպմանն ու նախապատրաստությանն առնչվող ընթացակարգային հարցերը (*թվարկված թեմաներն արձանագրվում էին նաեւ մեկնաբանական հաղորդումները եւ թերթային հրատարակումներն ուսումնասիրելիս*):

## **Բ. ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ**

### ***Մեկնաբանական հաղորդումների հեռագոտության մեթոդալոգիան ներառում էր.***

- Հաղորդման հիմնական մասնակիցների արձանագրում՝ նշելով յուրաքանչյուրի անունը, ազգանունը, պաշտոնը կամ զբաղմունքը:

- Հաղորդման մեջ մոնիտորինգի թեմայի առկայության ձեւի որոշումը (բացարձակ թվերով).

1. ամբողջությամբ մոնիտորինգի թեմային վերաբերող հաղորդում,
2. մասնակիորեն մոնիտորինգի թեմային վերաբերող կամ դրա հիշատակում պարունակող հաղորդում:

- Հաղորդման մեջ մոնիտորինգի թեմայի նկատմամբ վերաբերմունքի բնույթի՝ դրական, բացասական, չեզոք, որոշումը (բացարձակ թվերով): Յուրաքանչյուր հաղորդման մեջ արձանագրվում էր մոնիտորինգի թեմայի հիշատակման միայն մեկ նշան:

- Յուրաքանչյուր հաղորդման մեջ սահմանադրական բարեփոխումներին անմիջականորեն վերաբերող թեմաների (*դրանց ցանկը տես վերելում*) արձանագրում (բացարձակ թվերով):

## **2. ԹԵՐԹԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՄԵԹՈԴԱԼՈԳԻԱՆ**

- Թերթի յուրաքանչյուր համարի հրապարակումների (բացառությամբ եղանակի տեսության, քաղաքական եւ առեւտրային գովազդի, այդ թվում՝ հայտարարությունների, հեռուստածրագրերի ծանուցման, բախտագուշակների, խաչբառերի եւ այլն) ընդհանուր քանակի հաշվարկը (բացարձակ թվերով): Թերթի զանազան հավելվածներն ու ներդիրները չեն դիտարկվել:

### **Հրատարակում էր համարվում.**

**ա)** թերթային տեքստի (հոդված, ակնարկ, ռեպորտաժ եւ այլն) թեմատիկորեն, կառուցվածքով եւ ձեւավորմամբ առանձնացված միավորը,

**բ)** հրապարակումների ծանուցումները դիտարկվել են իբրեւ այն նյութի մաս, որին վերաբերում էին,

**գ)** վերնագիրը, ենթավերնագիրը, հրապարակմանը նախորդող լիդը, դիտարկվել են իբրեւ այն նյութի մաս, որին վերաբերում էին,

**դ)** այս կամ այն հրապարակման խմբագրական մեկնաբանությունը, որն առանձնացված էր «խմբագրության կողմից», «խմբագրության մեկնաբանությունը» եւ նման բառերով, դիտարկվել են իբրեւ առանձին նյութ,

**ե)** լուսանկարը (նկարը, ծաղրանկարը, շարժը, կուլաժը, իլյուստրացիան, գրաֆիկը եւ այլն), որը թերթային հրապարակման մաս չէր եւ ընդամենն ուներ վերնագիր, տեքստ կամ իմաստային բեռ էր կրում, դիտարկվում էր իբրեւ առանձին նյութ: Եթե լուսանկարը ուղեկցում էր թերթային հրապարակմանը, ապա դիտարկվում էր իբրեւ այն նյութի մաս, որին վերաբերում էր:

- Մոնիտորինգի թեմայի առկայության ձեւի որոշումը (բացարձակ թվերով).

1. ամբողջությամբ մոնիտորինգի թեմային վերաբերող թերթային հրապարակումների հաշվարկը,

2. մասնակիորեն մոնիտորինգի թեմային վերաբերող կամ դրա հիշատակում պարունակող թերթային հրապարակումների հաշվարկը:

- Թերթի յուրաքանչյուր համարում 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեի, Սահմանադրության փոփոխությունների մասին հիշատակումների քանակի հաշվարկը (բացարձակ թվերով): Մեկ հրապարակման մեջ արձանագրվում էր մոնիտորինգի թեմայի միայն մեկ հիշատակում:

- Թերթի յուրաքանչյուր համարի հրապարակումներում 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեի, Սահմանադրության փոփոխությունների հիշատակումների բնույթի՝ դրական, բացասական, չեզոք, որոշումը (բացարձակ թվերով): Յուրաքանչյուր հրապարակման մեջ արձանագրվում էր մոնիտորինգի թեմայի հիշատակման բնույթի միայն մեկ նշան:

- Թերթի յուրաքանչյուր հրապարակման մեջ սահմանադրական բարեփոխումների անմիջականորեն վերաբերող թեմաների (*դրանց ցանկը տես վերելում*) արձանագրում (բացարձակ թվերով):

#### **IV. ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ԶԼՄ-ՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ (ՀԻ)** - հանրային հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 2001 թվականին: Ղեկավար մարմինը - Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ: Եթեր դուրս գալու պարբերականությունը - օրական 19 ժամ:

ՀԻ-ում հետազոտվել են «**Հայլուր**» լրատվական եւ կիրակնօրյա «**360 աստիճան**» լրատվական-վերլուծական ծրագրերը, մեկնաբանական «**Խաչմերուկ**» եւ «**5-րդ անիվ**» հաղորդումները:

«**Հայլուր**» լրատվական ծրագիրը եթեր է հեռարձակվել շաբաթական 6 օր, երկուշաբթից - ուրբաթ օրական 6 անգամ, շաբաթ օրերը՝ 5 անգամ: Մոնիտորինգի են ենթարկվել «Հայլուրի» ժամը 21:00-ի հիմնական թողարկումները, բացառությամբ նոյեմբերի 24-ի թողարկումը, որը եթեր է հեռարձակվել ժամը 19:00-ին: Մոնիտորինգի ընթացքում հետազոտվել է 18 թողարկում:

«**360 աստիճան**» լրատվական-վերլուծական ծրագիրը եթեր է հեռարձակվել շաբաթական մեկ օր (կիրակի), ժամը 20:00-ին: Մոնիտորինգի ընթացքում հետազոտվել է «360 աստիճանի» 3 թողարկում:

«**Խաչմերուկ**» մեկնաբանական հաղորդումը եթեր է հեռարձակվել շաբաթական 3 օր (երեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ), ժամը 18:50-ին, բացառությամբ նոյեմբերի 24-ի թողարկման, որը հեռարձակվել է 18:20-ին: Մոնիտորինգի ընթացքում հետազոտվել է «Խաչմերուկի» 9 թողարկում:

«**5-րդ անիվ**» մեկնաբանական հաղորդումը եթեր է հեռարձակվել շաբաթական 1 օր (երկուշաբթի), ժամը 22:00-ին: Մոնիտորինգի ընթացքում հետազոտվել է «5-րդ անիվի» 3 թողարկում:



**ԱԼՄ** - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 2000 թվականին: Հիմնադիրը - «ԱԼՄ հոլդինգ» ընկերության նախագահ Տիգրան Կարապետյան: Եթեր դուրս գալու պարբերականությունը - օրական 21 ժամ:

ԱԼՄ-ում հետազոտվել է «**Օրեցօր**» հիմնական լրատվական ծրագիրը եւ նրա կիրակնօրյա լրատվական-վերլուծական թողարկումը, մեկնաբանական «**Հարցի արժեքը**» եւ «**Դիրքորոշում**» հաղորդումները:

**«Օրեցօր»** լրատվական ծրագիրը եթեր է հեռարձակվել շաբաթական 7 օր, երկուշաբթիից - շաբաթ օրական 4 անգամ, կիրակի օրերը՝ 1 անգամ: Մոնիտորինգի են ենթարկվել «Օրեցօրի» ժամը 20:00-ի հիմնական եւ կիրակի օրերին՝ ժամը 17:00-ի (նոյեմբերի 6-ին) եւ 14:00-ի (նոյեմբերի 20-ին) թողարկումները: Մոնիտորինգի ընթացքում հետազոտվել է 20 թողարկում:

**«Հարցի արժեքը»** մեկնաբանական հաղորդումը եթեր է հեռարձակվել շաբաթական 2 օր (երեքշաբթի եւ շաբաթ), ժամը 21:30-ին: Մոնիտորինգի ընթացքում հետազոտվել է «Հարցի արժեքի» 5 թողարկում:

**«Դիրքորոշում»** մեկնաբանական հաղորդումը եթեր է հեռարձակվել շաբաթական 1 օր (հինգշաբթի), ժամը 21:30-ին: Մոնիտորինգի ընթացքում հետազոտվել է «Դիրքորոշման» 3 թողարկում:



**«ԱՐՄԵՆԻԱ»** - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 1998 թվականին: Հիմնադիրները - «Գաֆեսյան» ընտանեկան ֆոնդ եւ «Սարգսյանների ընտանիք» ֆոնդ: Եթեր դուրս գալու պարբերականությունը - օրական 24 ժամ:

«Արմենիա»-ում հետազոտվել է **«Ժամը»** հիմնական լրատվական ծրագիրը եւ մեկնաբանական **«Իրականում»** հաղորդումը:

**«Ժամը»** լրատվական ծրագիրը եթեր է հեռարձակվել շաբաթական 7 օր, երկուշաբթիից - շաբաթ օրական 4 անգամ, կիրակի օրերը՝ 1 անգամ: Մոնիտորինգի են ենթարկվել «Ժամը» ծրագրի ժամը 20:30-ի հիմնական թողարկումները: Մոնիտորինգի ընթացքում հետազոտվել է 21 թողարկում:

**«Իրականում»** մեկնաբանական հաղորդումը եթեր է հեռարձակվել շաբաթական 5 օր (երկուշաբթիից-ուրբաթ), ժամը 19:00-ին, բացառությամբ նոյեմբերի 7-ի եւ 8-ի թողարկումների, որոնք հեռարձակվել են ժամը 22:30-ին: Մոնիտորինգի ընթացքում հետազոտվել է «Իրականումի» 15 թողարկում:



**ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՄՏԱՍԼԻՔ (Հ2)** - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 1998 թվականին: Հիմնադիրը - մասնավոր անձինք: Եթեր դուրս գալու պարբերականությունը - օրական 18 ժամ:

Հ2-ում հետազոտվել են **«Լրաբեր»** լրատվական եւ **«Կիրակնօրյա լրաբեր»** լրատվական-վերլուծական ծրագրերը, մեկնաբանական **«Չորրորդ ստուղի»** եւ **«Խոսքի իրավունք»** հաղորդումները:

**«Լրաբեր»** լրատվական ծրագիրը եթեր է հեռարձակվել շաբաթական 6 օր, երկուշաբթի՝ օրական 3 անգամ, երեքշաբթիից - շաբաթ՝ օրական 5 անգամ: Մոնիտորինգի են ենթարկվել «Լրաբերի» ժամը 23:00-ի հիմնական թողարկումները, բացառությամբ նոյեմբերի 25-ի թողարկումը, որը եթեր է հեռարձակվել ժամը 20:00-ին: Մոնիտորինգի ընթացքում հետազոտվել է 18 թողարկում:

**«Կիրակնօրյա լրաբեր»** լրատվական-վերլուծական ծրագիրը եթեր է հեռարձակվել շաբաթական մեկ օր (կիրակի), ժամը 21:00-ին: Մոնիտորինգի ընթացքում հետազոտվել է «Կիրակնօրյա լրաբերի» 3 թողարկում:

**«Չորրորդ ստուդիա»** մեկնաբանական հաղորդումը եթեր է հեռարձակվել «Լրաբեր» լրատվական ծրագրի շրջանակներում: Մոնիտորինգի ընթացքում հետազոտվել է «Չորրորդ ստուդիայի» 9 թողարկում:

**«Խոսքի իրավունք»** մեկնաբանական հաղորդումը եթեր է հեռարձակվել շաբաթական 1 օր (կիրակի), ժամը 21:30-ին, բացի այդ նոյեմբերի 12-ին եղել է հատուկ թողարկում՝ ժամը 20:30-ին: Մոնիտորինգի ընթացքում հետազոտվել է «Խոսքի իրավունքի» 4 թողարկում:



**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»** - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթական հինգ անգամ): Հիմնադրվել է 1990 թվականին: Հիմնադիրը - «Հանրապետություն» ՓԲԸ: Հիմնական ծավալը - 4 տպագրական մամուլ (A2 չափսի 8 էջ): Հայտարարված տպաքանակը - 6000 օրինակ: Հետազոտված ժամանակաշրջանում լույս է տեսել 15 համար, որից 1-ը 6 տպագրական մամուլ (A2 չափսի 12 էջ) ծավալով:



**«ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱ ԱՐՄԵՆԻԱ»** - ռուսերեն թերթ (լույս է տեսնում շաբաթական երկու անգամ): Հիմնադրվել է 1990 թվականին: Հիմնադիրը - «Հայաստանի Հանրապետություն - Ռեսպուբլիկա Արմենիա» ՓԲԸ: Հիմնական ծավալը - 2 տպագրական մամուլ (A3 չափսի 8 էջ): Հայտարարված տպաքանակը - 2000 օրինակ: Հետազոտված ժամանակաշրջանում լույս է տեսել 6 համար, որից 1-ը 4 տպագրական մամուլ (A3 չափսի 16 էջ) ծավալով:



**«ԱԶԳ»** - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթական հինգ անգամ): Հիմնադրվել է 1991 թվականին: Հիմնադիրը - «Ազգ» օրաթերթ» ՍՊԸ: Հիմնական ծավալը - 2 տպագրական մամուլ (A3 չափսի 8 էջ): Հայտարարված տպաքանակը - 3000 օրինակ: Հետազոտված ժամանակաշրջանում լույս է տեսել 15 համար, որոնցից 8-ը ունեցել են «Ազգ-ներդիր» հավելված, որը մոնիտորինգի առարկա չի հանդիսացել:



**«ԱՌԱՎՈՏ»** - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթական հինգ անգամ): Հիմնադրվել է 1994 թվականին: Հիմնադիրը - «Առավոտ» օրաթերթ» ՍՊԸ: Հիմնական ծավալը - 2 տպագրական մամուլ (A3 չափսի 8 էջ): Հայտարարված տպաքանակը - 4100 օրինակ: Հետազոտված ժամանակաշրջանում լույս է տեսել 15 համար, որից 4-ը 4 տպագրական մամուլ (A3 չափսի 16 էջ), իսկ 1-ը՝ 3 տպագրական մամուլ (A3 չափսի 12 էջ) ծավալով:



**«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»** - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթական հինգ անգամ): Հիմնադրվել է 1997 թվականին: Հիմնադիր - «Դարեսկիզբ» ՍՊԸ: Հիմնական ծավալը - 2 տպագրական մամուլ (A3 չափսի 8 էջ): Հայտարարված տպաքանակը - 4840 օրինակ: Հետազոտված ժամանակաշրջանում լույս է տեսել 15 համար, որից 4-ը 3 տպագրական մամուլ (A3 չափսի 12 էջ) ծավալով:



**«ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ»** - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթական հինգ անգամ): Հիմնադրվել է 1997 թվականին: Հիմնադիրը - «Հայոց աշխարհ» օրաթերթի խմբագրություն» ՍՊԸ: Հիմնական ծավալը - 2 տպագրական մամուլ (A3 չափսի 8 էջ): Հայտարարված տպաքանակը - 3500 օրինակ: Հետազոտված ժամանակաշրջանում լույս է տեսել 15 համար, որից 2-ը 4 տպագրական մամուլ (A3 չափսի 16 էջ), իսկ 1-ը՝ 3 տպագրական մամուլ (A3 չափսի 12 էջ) ծավալով:



**«ԳՈՂՈՍ ԱՐՄԵՆԻԻ»** - ռուսերեն թերթ (լույս է տեսնում շաբաթական երեք անգամ): Հիմնադրվել է 1991 թվականին: Հիմնադիրը - «Գոլոս» ՍՊԸ: Հիմնական ծավալը - 4 տպագրական մամուլ (A2 չափսի 8 էջ): Հայտարարված տպաքանակը - 3500 օրինակ: Հետազոտված ժամանակաշրջանում լույս է տեսել 9 համար, որոնցից 3-ը ունեցել են «Մոնիտոր.Րս» հավելված, որը դիտարկման առարկա չի հանդիսացել:

## **V. ՀԵՌՈՒՄՏԱԿԱԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԹԵՐԹԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ**

Համեմատելի նյութ ունենալու համար, յուրաքանչյուր հեռուստաալիքի լրատվական, լրատվական-վերլուծական ծրագրերի, մեկնաբանական հաղորդումների, ինչպես նաև յուրաքանչյուր թերթի հրապարակումների մոնիտորինգի արդյունքների տվյալներն ընդհանրացվում էին ամեն շաբաթ եւ մոնիտորինգի ողջ ժամանակաշրջանում:

## **VI. ՀԵՌՈՒՄՏԱԿԱԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԹԵՐԹԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ստորեւ ներկայացվում են մոնիտորինգի ողջ ժամանակաշրջանի (2005 թվականի նոյեմբերի 5-ից 25-ը) ընդհանրացված տվյալները՝ ըստ հետազոտված յուրաքանչյուր հեռարձակվող եւ տպագիր ՁԼՄ-ի:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ (Հ1)

Մոնիտորինգի ամբողջ ժամանակաշրջանում «Հայլուր» լրատվական ծրագրի հետազոտված հիմնական թողարկումների ընդհանուր տեւողությունը կազմել է 48 985 վայրկյան, որից Սահմանադրության փոփոխություններին, հանրաքվեին եւ դրանց առնչվող այլ հարցերին հատկացվել է 11 459 վրկ. (կամ՝ 23,4%): Ընդամին, «Հայլուրի» 497 հեռուստանյութերից 98-ում (19,7%) շոշափվել է մոնիտորինգի թեման: Սրան նվիրված տեղեկատվական նյութերը մեծ մասամբ ունեցել են կամ չեզոք, կամ դրական բնույթ՝ համապատասխանաբար 49 եւ 41 հիշատակում: Դրական լուսաբանումը հիմնականում բաժին էր ընկնում սահմանադրական փոփոխությունների ընդունման կողմնակիցների («Այո» շտաբ) քարոզարշավի ռեպորտաժներին: Դրանցում հնչեցվում էին այդ անձանց դիրքորոշումներն ինչպես Սահմանադրությանը, հանրաքվեի կազմակերպմանն ու անցկացմանն առնչվող մի շարք ընդհանուր հարցերի, այնպես էլ նախագծի՝ երկքաղաքացիությանը, ՀՀ նախագահի եւ խորհրդարանի լիազորություններին, քաղաքացիների իրավունքներին եւ ազատություններին առնչվող կոնկրետ դրույթների վերաբերյալ: Բացասական բնույթ ունեին 8 լրատվական նյութեր, որոնցում փոփոխվող Սահմանադրության հակառակորդները («Ոչ» շտաբ) իրենց քարոզարշավի ընթացքում կոչ էին անում քվեարկել դեմ, իսկ ավելի ուշ՝ բոյկոտել հանրաքվեն:

Ինչ վերաբերում է թեմատիկ ընդգրկմանը, ապա «Հայլուրում» լուսաբանվել են նախագծի բոլոր բաժինները, բացառությամբ համայնքի ղեկավարի պաշտոնանկության խնդրի: Լրատվական ծրագիրը առավել հաճախ անդրադարձնում էր 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեի կազմակերպմանն ու անցկացմանն առնչվող հարցերին (79 նյութերում) եւ սահմանադրական փոփոխությունների այլ ընդհանուր հարցերին (32): Երկքաղաքացիության խնդիրը շոշափվել է 15 նյութերում, նախագահի լիազորությունները՝ 12, նույնքան նյութերում՝ ՀՀ քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները: 9 դեպքում խոսվել է Ազգային ժողովի լիազորությունների, 5-ական անգամ տեղական ինքնակառավարման եւ դատական իշխանության անկախության մասին: Այլ թեմաների հիշատակումները հատուկեմտ են եղել:

«360 աստիճան» լրատվական-վերլուծական ծրագրի հետազոտված 8877 վայրկյանից 2604 վայրկյանը (կամ 29,3 %) վերաբերել է մոնիտորինգի թեմային: Այն հիշատակվել է կիրակնօրյա ծրագրի 18 նյութերից 6-ում. 4 անգամ՝ չեզոք: 2 դրական լուսաբանումները անդրադարձել են Երեւանի պետական համալսարանի ուսանողների հետ երկրի նախագահի հանդիպմանը եւ Ռոբերտ Քոչարյանի Հունաստան կատարած այցին: Երկու միջոցառումների ընթացքում էլ սահմանադրական փոփոխությունները ուշադրության են արժանացել:

«Հայլուրի» եւ «360 աստիճանի» ընդհանուր առմամբ հետազոտված 57 862 վայրկյան եթերաժամանակի 14 063 վայրկյանը (կամ 24,3 %) հատկացվել է սահմանադրական փոփոխություններին: Ընդամին 53 նյութերում լուսաբանումը կրել է չեզոք, 43-ում դրական եւ 8-ում բացասական բնույթ:

Մոնիտորինգի ժամանակաշրջանում Հ1-ի «5-րդ անիվ» մեկնաբանական հաղորդման հետազոտված բոլոր երեք թողարկումներն էլ ամբողջությամբ նվիրված են եղել մոնիտորինգի թեմային: Երկու հաղորդումներ չեզոք բնույթ են ունեցել, դրանց մասնակիցներն ինչպես դրական, այնպես էլ բացասական կարծիքներ են արտահայտել Հիմնական օրենքի փոփոխությունների վերաբերյալ: Դրանցից մեկում «կողմ» եւ «դեմ» բանավեճն ընթացել է երկքաղաքացիության հարցի շուրջ: Մյուսում՝ Հայաստանի եվրոինտեգրացման հեռանկարը քննարկվել է սահմանադրական փոփոխությունների, մասնավորապես՝ քաղաքացիների իրավունքների եւ ազատությունների, օրենսդիր եւ դատական իշխանությունների լիազորությունների տարանջատման համատեքստում: Երրորդ հաղորդման հիմնական թեման հանրաքվեի դրված նախագծով նախատեսվող դատական բարեփոխումներն էին: Դրա երկու մասնակիցներն էլ փոփոխությունների այդ հատվածի վերաբերյալ դրական կարծիք են հայտնել:

Քարոզարշավի ընթացքում Հ1-ը բացել էր «Խաչմերուկ» խորագրով մոր հաղորդաշար: Դրա բոլոր ինը հաղորդումներն ամբողջությամբ վերաբերել են սահմանադրական փոփոխություններին: «Խաչմերուկում» հերթագայությամբ հյուրընկալվել են երկու՝ «այո»-ի եւ «ոչ»-ի ճամբարի ներկայացուցիչները: Այդպիսով հաղորդման 5 թողարկում կրել է դրական, 4 թողարկում՝ բացասական բնույթ: Դրանցում առավել հաճախ շոշափվել են ընդհանուր թեմաները (9 դեպքում), հանրաքվեին առնչվող կազմակերպական հարցերը, երկքաղաքացիությունը եւ նախագահի լիազորությունները (8-ական), քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները (6), խորհրդարանի լիազորությունները (5):

## ԱԼՄ

Մոնիտորինգի ամբողջ ժամանակաշրջանում հետազոտված «Օրեցօր» լրատվական ծրագրի եւ դրա կիրակնօրյա լրատվական- վերլուծական թողարկման ընդհանուր տեւողությունը կազմել 35 111 վայրկյան, որից 9182 վայրկյանը (կամ 26,2%) հատկացվել է սահմանադրական փոփոխություններին: Ընդամին, «Օրեցօրի» 335 հեռուստանյութերից 58-ում (կամ 17,3%) շոշափվել են մոնիտորինգի թեմաները: Դրան նվիրված նյութերի մեծ մասը՝ 35-ը, ունեցել է չեզոք բնույթ, 20-ը՝ դրական, 3-ը՝ բացասական: Ինչպես եւ Հ1-ի դեպքում, նշանային հիշատակումները հիմնականում եղել են Սահմանադրության փոփոխությունների կողմնակիցների եւ հակառակորդների այն քարոզչական միջոցառումներին վերաբերող լրատվական նյութերում, որտեղ ներկայացվել են նրանց տեսակետները նախագծի տարբեր դրույթների մասին: Ինչպես եւ «Հայլուրը», ԱԼՄ-ի լրատվական ծրագիրը եւս առավել հաճախ լուսաբանել է հանրաքվեի կազմակերպմանն ու անցկացմանն առնչվող հարցերը (45 նյութերում), սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ այլ ընդհանուր հարցեր (27), երկքաղաքացիությունը (12) եւ նախագահի լիազորությունները (10): Ազգային ժողովի լիազորությունների եւ քաղաքացիների իրավունքների ու ազատությունների մասին խոսվել է համապատասխանաբար 9 եւ 8 նյութերում: Այլ թեմաների հիշատակումները հատուկենտ են եղել: Երեւանի կարգավիճակը, տեղեկատվության եւ խոսքի ազատության բնագավառը ոչ մի անգամ չեն շոշափվել:

ԱԼՄ-ի «Դիրքորոշում» եւ «Չարցի արժեքը» մեկնաբանական ծրագրերի թողարկումներից ոչ մեկն անբողջությամբ նվիրված չի եղել մոնիտորինգի թեմային: «Դիրքորոշման» մեջ բոլոր երեք չեզոք մասնակի հիշատակումները վերաբերել են ընդհանուր սահմանադրական եւ հանրաքվեին առնչվող հարցերին, ինչպես նաեւ՝ երկքաղաքացիությանը, նախագահական լիազորություններին, քաղաքացիական իրավունքներին եւ ազատություններին: Ինչ վերաբերում է «Չարցի արժեքին», ապա մոնիտորինգի ընթացքում ուսումնասիրված հինգ թողարկումներից միայն մեկում է հյուր եղել: Մյուս չորս թողարկումների միակ մասնակիցը եղել է ԱԼՄ-ի սեփականատեր եւ հաղորդման վարող Տիգրան Կարապետյանը: «Չարցի արժեքի» 5 մասնակի հիշատակումներից 3-ը դրական էին, 2-ը՝ չեզոք: Չաղորդման մեջ շոշափվել են ընդհանուր հարցերն ու նախագահի լիազորությունները, երկքաղաքացիությունը եւ Երեւանի կարգավիճակը, հանրաքվեին առնչվող հարցերը, տեղական ինքնակառավարումը, խորհրդարանի լիազորությունները եւ քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները:

### «ԱՐՄԵՆԻԱ»

Մոնիտորինգի ժամանակաշրջանում ուսումնասիրվել է «Ժամը» լրատվական ծրագրի հիմնական թողարկումների ընդհանուր 29 144 վայրկյան, որից 7624 վայրկյանը (կամ 26,2%) հատկացվել է սահմանադրական բարեփոխումներին: Այսպիսով, եւ «Արմենիա»-ն եւ ԱԼՄ-ը մոնիտորինգի թեմային հատկացրել են լրատվական եթերաժամանակի հավասար ծավալ (տոկոսային արտահայտությամբ): Սակայն «Արմենիա»-ում հետազոտված լրատվական նյութերի ընդհանուր քանակի մեջ մոնիտորինգի թեմային վերաբերող նյութերի բաժինը համարյա երկու անգամ գերազանցում է ԱԼՄ-ի նույն ցուցանիշին: «Ժամը» ծրագրի 191 նյութերից 63-ը (կամ 33%) նվիրված էին սահմանադրական թեմաներին: Ընդամենը, համաժողովրդական քվեարկության դրված փոփոխությունների մասին խոսվել է մեծամասամբ դրական՝ 38 անգամ, եւ չեզոք՝ 25 անգամ: Բացի այս, «Ժամը» մոնիտորինգի ենթարկված լրատվական ծրագրերից միակն է, որտեղ Սահմանադրության փոփոխությունների հիշատակումները ոչ մի անգամ բացասական բնույթ չեն ունեցել: Իբրեւ հիշատակումների դրական համատեքստ է ծառայել նորացված Սահմանադրության կողմնակիցների քարոզարշավի մասին տեղեկատվությունը: Իսկ նախագծի հակառակորդների քարոզչական գործունեության լուսաբանումն այնպիսին էր, որ համատեքստը չեզոք էր ստացվում: Այսինքն, լրագրողները կամ շրջանցում էին համապատասխան միջոցառման բովանդակությունը, կամ ռեպորտաժներում եղած անձանց՝ փոփոխությունների վերաբերյալ բացասական դիրքորոշումները այս կամ այն կերպ փոխհատուցվում էր մեկնաբանություններով: Առավել մեծ ուշադրություն է դարձվել ընդհանուր (47 նյութերում) եւ հանրաքվեին վերաբերող (36) հարցերին: Երկքաղաքացիության եւ խորհրդարանի լիազորությունների մասին խոսվել է 16-ական անգամ, նախագահի լիազորությունների, քաղաքացիների իրավունքների եւ ազատությունների մասին՝ 13-ական, ՅՅ կառավարության իրավասությունների եւ լիազորությունների ու դատական իշխանության անկախության մասին 5-ական անգամ: Այլ թեմաներին բաժին են ընկել հատուկեւտ հիշատակումներ: Տեղեկատվության եւ խոսքի ազատության բնագավառը, դատախազության կարգավիճակն ու լիազորությունները, ինչպես նաեւ համայնքի ղեկավարի պաշտոնանկության խնդիրը լրատվական ծրագրում ոչ մի անգամ չեն շոշափվել:

«Արմենիա»-ի մեկնաբանական «Իրականում» ծրագրի՝ մոնիտորինգի ընթացքում ուսումնասիրված 15 թողարկումներից 13-ը նվիրված էր սահմանադրական փոփոխություններին. 12-ը՝ ամբողջությամբ, 1-ը՝ մասնակիորեն: Հաղորդման 12 թողարկումներում հյուր են եղել հանրաքվեի դրված նախագծի կողմնակիցները, որոնք դրական են արտահայտվել դրա մասին: Միակ բացասական գնահատականը հնչել է, երբ «Իրականումի» հյուրն է եղել ընդդիմության ներկայացուցիչ, «Ազգային ժողովրդավարների դաշինք» կուսակցության նախագահ Արշակ Սադոյանը: Քննարկումների հիմնական թեմաներ են եղել, մասնավորապես, ընդհանուր հարցերը (13), նախագահական եւ խորհրդարանական լիազորությունները (10-ական), հանրաքվեի կազմակերպման եւ անցկացման հարցերը, քաղաքացիների իրավունքները եւ ազատությունները (9-ական), երկքաղաքացիությունը (5):

### **ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՄՏԱԿԱԼԻՔ**

Մոնիտորինգի ամբողջ ժամանակաշրջանում «Լրաբեր» լրատվական ծրագրի տեւողությունը կազմել է 39 206 վայրկյան, որից 12 607 վայրկյանը (կամ 32,2%) հատկացվել է սահմանադրական բարեփոխումներին: Ընդսմին, «Լրաբերի» 400 հեռուստանյութերից 106-ում (կամ 26,5%) շոշափվել է մոնիտորինգի թեման: Ինչպես եւ «Արմենիա»-ում, Հ2-ի լրատվական լուսաբանումներում («Լրաբերում») գերակշռում էին դրական հիշատակումները՝ 58, այն դեպքում, երբ չեզոքները եղել են 39, իսկ բացասականները՝ 9: Դրական համատեքստը հիմնականում առկա էր սահմանադրական փոփոխությունների կողմնակիցների քարոզարշավի մասին ռեպորտաժներում, բացասականը՝ վերջիններիս ընդդիմախոսների ելույթներում: Ամենից հաճախ ներկայացվել են կարծիքներ ընդհանուր (82 նյութերում) եւ սահմանադրությանն առնչվող (73) հարցերի վերաբերյալ: Այնուհետեւ եղել են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են նախագահի լիազորությունները (24), երկքաղաքացիությունը, քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները (23-ական), խորհրդարանի լիազորությունները (19), դատական իշխանության անկախությունը (10): Ամբողջության մեջ, ինչպես եւ «Հայլուրում» (Հ1), «Լրաբերում» լուսաբանվել են նախագծի բոլոր թեմատիկ բաժինները, բացառությամբ համայնքի ղեկավարի պաշտոնանկության խնդրի:

«Կիրակնօրյա լրաբեր» լրատվական-վերլուծական ծրագրի ուսումնասիրված թողարկումների 5529 վայրկյան ընդհանուր տեւողության 1326 վայրկյանը (կամ 24%), նվիրված է եղել մոնիտորինգի թեմային: Այն հիշատակվել է կիրակնօրյա այդ ծրագրի 22 նյութերից 7-ում, հիմնականում դրական համատեքստում՝ 5: Չեզոք հիշատակում եղել է 2 անգամ, բացասական՝ ոչ մի: Մեծամասամբ խոսվել է ընդհանուր հարցերի եւ հանրաքվեի կազմակերպման ու անցկացման մասին:

Ընդհանուր առմամբ «Լրաբերի» եւ «Կիրակնօրյա լրաբերի» ուսումնասիրված եթերաժամանակի 44 735 վայրկյանից 13 933 վայրկյանը (կամ 31,1%) հատկացվել է սահմանադրական բարեփոխումներին: Ընդսմին, լուսաբանումը 63 նյութերում ուներ դրական բնույթ, 41-ում՝ չեզոք եւ 9-ում՝ բացասական:

Այսպիսով, բոլոր ուսումնասիրված հեռարձակվող ՁԼՄ-ներից 32-ը լրատվական լուսաբանումներում մոնիտորինգի թեման ամենից շատն է ուշադրության արժանացրել, եւ լուսաբանումը, ինչպես եւ «Արմենիա» հեռուստաընկերությունում, աչքի է ընկել վառ արտահայտված նշանայնությամբ. նշանային (մեծամասամբ դրական) հիշատակումները գերազանցել են չեզոքները:

Դեպի դրականը շեղումը բնորոշ էր նաեւ 32-ի «Չորրորդ ստուդիա» եւ «Խոսքի իրավունք» մեկնաբանական ծրագրերին: «Չորրորդ ստուդիայի» 9 հետազոտված թողարկումներից 7-ը ամբողջությամբ, իսկ 2-ը մասնակիորեն նվիրված են եղել Սահմանադրության փոփոխություններին: Ընդամին, նախագծի վերաբերյալ միակ բացասական հիշատակումը հնչել է թեմային մասնակիորեն վերաբերող թողարկումներից մեկում: Մյուս 8 թողարկումների հյուրերը կողմ են արտահայտվել նորացված 3-ինական օրենքի ընդունմանը: «Խոսքի իրավունքի» 4 թողարկումներից 3-ը ամբողջությամբ շոշափում էին ուսումնասիրվող թեման, 2-ը՝ դրականորեն, 1-ը՝ չեզոք: Երկու մեկնաբանական հաղորդումների մասնակիցներն էլ քննարկել են նախագծի զանազան հարցերը, բացառությամբ համայնքի ղեկավարների պաշտոնանկության եւ Երեւանի կարգավիճակի, ընտրական իրավունքի եւ հանրաքվեների խնդիրների:

### **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»**

«Հայաստանի Հանրապետության» 698 ուսումնասիրված հրապարակումներից 125-ը (կամ 17,9%) նվիրված է եղել սահմանադրական բարեփոխումներին: 103-ը (82,4%)՝ ամբողջությամբ եւ 22-ը (17,6%)՝ մասնակիորեն: 72 հրապարակումներում լուսաբանումը չեզոք էր, 53-ում՝ դրական: Միանշանակ բացասական վերաբերմունք պաշտոնաթերթի էջերում չի եղել եւ ոչ մի նյութում: Լայնորեն լուսաբանվել է «այո» եւ «ոչ» շտաբների քարոզարշավները: Ընդամին, նորացված Սահմանադրության կողմնակիցների գործունեությանը նվիրված հոդվածները հիմնականում դրական համատեքստում էին, հակառակորդներինը՝ չեզոք: Մասնավորապես, հրապարակվում էին տարբեր կարծիքներ, որոնք դրական էին գնահատում խորհրդարանի լիազորությունների ընդլայնման եւ նախագահի լիազորությունների կրճատման, դատական իշխանության անկախության, երկքաղաքացիության արգելքի վերացման, տեղական ինքնակառավարման ոլորտի նորամուծությունների հարցերը: Ընդհանուր առմամբ, թեմատիկ ընդգրկման առումով, թերթն ամենից շատ ուշադրության է արժանացրել հանրաքվեի կազմակերպման եւ անցկացման հարցերին (60 հրապարակումներում), ընդհանուր հարցերին (59), Ազգային ժողովի լիազորություններին (34), երկքաղաքացիությանը (23), նախագահի լիազորություններին (20), քաղաքացիների իրավունքներին եւ ազատություններին (19), դատական իշխանության անկախությանը (16): Սահմանադրական փոփոխությունների մյուս բոլոր թեմաները նույնպես շոշափվել են «Հայաստանի Հանրապետության» հրապարակումներում:

## «ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱ ԱՐՄԵՆԻԱ»

«Ռեսպուբլիկա Արմենիայի» 150 ուսումնասիրված հրապարակումներից 32-ը (կամ 21,3%) նվիրված է եղել սահմանադրական բարեփոխումներին: 26-ը (81,2%)՝ ամբողջությամբ եւ 6-ը (18,8%)՝ մասնակիորեն: Ինչպես եւ «Հայաստանի Հանրապետությունը», նույնանուն ռուսալեզու պաշտոնաթերթը աչքի է ընկել բացասական բնույթի հիշատակումների բացակայությամբ. 19 հրապարակումներում լուսաբանումը չեզոք էր, 13-ում՝ դրական: Մասնավորապես ներկայացվել են դիրքորոշումներ, որոնք դրական են գնահատել օրենսդիր մարմնի լիազորությունների ընդլայնումը ի հաշիվ նախագահական լիազորությունների կրճատման, ինչպես նաեւ իշխանության երեք թեւերի հավասարակշռումն ընդհանրապես: Բացի երկու՝ տեղեկատվության ոլորտի եւ խոսքի ազատության, դատախազության կարգավիճակի եւ լիազորությունների թեմաների, սահմանադրական փոփոխությունների մյուս բոլոր թեմատիկ բաժինները այս կամ այն հաճախականությամբ հիշատակվել են «Ռեսպուբլիկա Արմենիայի» հրապարակումներում: Սակայն ամենից մեծ ուշադրություն դարձվել է ընդհանուր եւ հանրաքվեին առնչվող հարցերին (համապատասխանաբար 19 եւ 14 հրապարակումներում):

## «ԱԶԳ»

«Ազգի» 530 ուսումնասիրված հրապարակումներից 43-ը (կամ 8,1%) նվիրված է եղել սահմանադրական բարեփոխումներին: 33-ը (76,7%)՝ ամբողջությամբ եւ 10-ը (23,3%)՝ մասնակիորեն: Սոնիտորինգի ենթարկված բոլոր տպագիր ՁԼՄ-ներից «Ազգն» ամենից քիչն է անդրադարձել Սահմանադրության թեմային: Բացի այս, սա միակ հրատարակությունն է, որտեղ նշանային հիշատակումների հարաբերակցությունը համարյա հավասար է. 8 բացասական եւ 7 դրական: Իսկ լուսաբանումների մեծ մասը՝ 28-ը, եղել է չեզոք: Իբրեւ դրական սահմանադրական փոփոխություններ նշվել են, մասնավորապես, երկքաղաքացիության արգելքի վերացումը եւ քաղաքացիների իրավունքների ու ազատությունների ընդլայնումը: Բացասական բնույթ ունեին հիմնականում սահմանադրական փոփոխությունների հակառակորդների քարոզարշավի մասին տեղեկատվական նյութերը, որոնցում բացասական տեսակետներ էին արտահայտվում: Թեմատիկ ընդգրկմամբ, թերթի էջերում հիշատակվել են սահմանադրական փոփոխությունների բոլոր բաժինները: Ընդսմին, հրատարակությունը առավել հաճախ անդրադարձել է հանրաքվեին առնչվող (39 հրապարակումներում) եւ ընդհանուր (21) հարցերին: Սրանց հաջորդում են քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները (15), ընտրական իրավունքը եւ հանրաքվեները (11):

## «ԱՌԱՎՈՏ»

«Առավոտի» 701 ուսումնասիրված հրապարակումներից 186-ը (կամ 26,5%) նվիրված է եղել սահմանադրական բարեփոխումներին: 157-ը (84,4%)՝ ամբողջությամբ եւ 29-ը (15,6%)՝ մասնակիորեն: Թերթի լուսաբանումը հիմնականում

չեզոք բնույթ է կրել՝ 133 հիշատակում: Ընդամին բացասական երանգով լուսաբանումները (42) համարյա չորս անգամ ավելի էին, քան դրականը (11): Սա բացատրվում է սահմանադրական փոփոխությունների հակառակորդների տեսակետների եւ նրանց քարոզարշավի նկատմամբ թերթի ուշադրությամբ: Այլոց թվում, իբրեւ նախագծի թերություն թերթի էջերում հաճախ է նշվել երկքաղաքացիության արգելքի վերացումը: Սահմանադրական բոլոր բաժինները առավել կամ պակաս հաճախականությամբ հիշատակվել են «Առավոտի» հրապարակումներում, սակայն մեծ մասը բաժին է ընկել հանրաքվեի կազմակերպմանն ու անցկացմանն առնչվող (125) եւ ընդհանուր (72) հարցերին: Մնացած թեմաներից յուրաքանչյուրը հիշատակվել է երկու տասնյակից ոչ ավելի անգամ. նախագահի լիազորություններ (21), երկքաղաքացիություն (17), խորհրդարանի լիազորություններ (15), քաղաքացիների իրավունքներ եւ ազատություններ (14):

### **«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»**

«Հայկական ժամանակի» 491 ուսումնասիրված հրապարակումներից 153-ը (կամ 31,2%) նվիրված է եղել սահմանադրական բարեփոխումներին: 131-ը (85,6%)՝ ամբողջությամբ եւ 22-ը (14,4%)՝ մասնակիորեն: Մոնիտորինգի ենթարկված բոլոր տպագիր ՁԼՄ-ներից «Հայկական ժամանակն» ամենից շատն է անդրադարձել Սահմանադրության թեմային: Այս թերթում նշանային եւ չեզոք հիշատակումների հարաբերակցությունը համարյա հավասար էր, ընդ որում առաջինների թվում գերակշռում էր բացասականը: Սահմանադրական փոփոխությունների նախագծի 76 չեզոք հիշատակումների դիմաց, բացասական էր 69-ը եւ դրական՝ 8-ը: Բացասական համատեքստով քննադատվում էին ինչպես սահմանադրական փոփոխություններն ընդհանրապես, այնպես էլ նախագծի առանձին, մասնավորապես՝ իշխանության օրենսդիր եւ գործադիր թեւերի լիազորություններին, երկքաղաքացիությանը վերաբերող դրույթները: Ուշադրություն էր դարձվում սահմանադրական փոփոխությունների հակառակորդների տեսակետներին եւ նրանց քարոզարշավին: «Հայկական ժամանակի» էջերում շոշափվել են սահմանադրական փոփոխությունների բոլոր բաժինները, դրանց մեծ մասը՝ ակտիվորեն: Ընդամին, նյութերի մեծ մասում խոսվում էր հանրաքվեի կազմակերպման եւ անցկացման մասին (127): Ընդհանուր հարցերը քննարկվել են 72 հրապարակումներում, քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները՝ 43, ընտրական իրավունքը եւ հանրաքվեները՝ 39, նախագահի եւ խորհրդարանի լիազորությունները՝ համապատասխանաբար 36 եւ 33: Երկքաղաքացիության հարցին, կառավարության իրավասություններին եւ լիազորություններին թերթն անդրադարձել է համապատասխանաբար 22 եւ 20 հրապարակումներում:

### **«ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ»**

«Հայոց աշխարհի» 539 ուսումնասիրված հրապարակումներից 145-ը (կամ 26,9%) նվիրված է եղել սահմանադրական բարեփոխումներին: 124-ը (85,5%)՝ ամբողջությամբ եւ 21-ը (14,5%)՝ մասնակիորեն: «Հայկական ժամանակից» հե-

տո տպագիր ՁԼՍ-ներից մոնիտորինգի թեմային ամենաշատ ուշադրություն արժանացրել է հենց այս թերթը: Ինչպես եւ «Հայկական ժամանակում», «Հայոց աշխարհում» էլ համարյա հավասար է չեզոք եւ նշանային հիշատակումների հարաբերակցությունը, սակայն ի տարբերություն «Հայկական ժամանակի» նշանայինների երանգը գերակշիռ մեծամասնությամբ դրական է՝ 70, բացասական հիշատակումները՝ 3-ն են, չեզոքը՝ 72-ը: Ուղիղ հակադարձ պատկերն է նկատվում նաեւ նախագծի առանձին դրույթներին նվիրված հրապարակումներում: Սասնավորապես, դրական վերաբերմունք է արտահայտվել իշխանության օրենսդիր եւ գործադիր թեւերի լիազորությունների վերաբաշխման, երկքաղաքացիության վերաբերյալ: Ուշադրություն է դարձվել նաեւ Սահմանադրության կողմնակիցների քարոզարշավին եւ դիրքորոշումներին: Ինչպես եւ «Հայկական ժամանակը», «Հայոց աշխարհում» էլ 127 հրապարակումներում անդրադարձել է հանրաքվեի կազմակերպման եւ անցկացման հարցերին: Այնուհետեւ ըստ հիշատակումների հաճախականության հետեւում են սահմանադրական փոփոխությունների ընդհանուր հարցերը (70), ընտրական իրավունքը եւ հանրաքվեները (51), քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները (47), խորհրդարանի եւ նախագահի լիազորությունները (համապատասխանաբար 31 եւ 28), երկքաղաքացիություն (27), կառավարության իրավասություններն ու լիազորությունները (20): Եվ դարձյալ ինչպես «Հայկական ժամանակում», «Հայոց աշխարհի» էջերում էլ մեծամասամբ ակտիվորեն քննարկվել են սահմանադրական փոփոխությունների բոլոր բաժինները, բացառությամբ համայնքի ղեկավարի պաշտոնանկության խնդրի:

### **«ԳՈԼՈՍ ԱՐՄԵՆԻԻ»**

«Գոլոս Արմենիի» թերթի 488 ուսումնասիրված հրապարակումներից 56-ը (կամ 11,5%) նվիրված է եղել սահմանադրական բարեփոխումներին: 45-ը (80,4%)՝ ամբողջությամբ եւ 11-ը (19,6%)՝ մասնակիորեն: Եվ թեպետ լուսաբանման մեծ մասը ունեցել է չեզոք բնույթ (34 հիշատակում), նշանային հիշատակումների հարաբերակցությունը նույնն է, ինչ «Առավոտում», սակայն տրամագծորեն հակառակ կերպով. դրական հիշատակումներն ավելի քան չորս անգամ գերազանցում են բացասականներին (համապատասխանաբար 18 եւ 4): Թերթի էջերում առավել հաճախ դրական են ներկայացվել երկքաղաքացիության արգելքի վերացումը, ինչպես նաեւ խորհրդարանի եւ նախագահի լիազորությունների վերաբաշխումը: Սահմանադրական բոլոր բաժինները այս կամ այն չափով շոշափվել են «Գոլոս Արմենիի» թերթի հրապարակումներում, սակայն առավել հաճախ հրատարակությունն անդրադարձել է ընդհանուր եւ հանրաքվեին առնչվող հարցերին (համապատասխանաբար՝ 31 եւ 28 անգամ): Երկքաղաքացիությունը հիշատակվել է 16 դեպքում, նախագահի լիազորությունները՝ 13, Ազգային ժողովի լիազորությունները եւ դատական համակարգի անկախությունը՝ 12-ական, քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները՝ 11:

## VII. ԱՄՓՈՓՈՒՄ

**1. Լրատվական լուսաբանումը հեռուստաընկերություններում:** Հեռարձակվող ՁԼՄ-ների մոնիտորինգի ենթարկված ողջ լրատվական լուսաբանումից 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեին, ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծին եւ սրանց առնչվող այլ հարցերին ամենից շատ **եթերաժամանակ** տրամադրել է Հայկական երկրորդ հեռուստաալիքը (այդ ալիքի հետազոտված ամբողջ լրատվական եթերաժամանակի 31,1%-ը): Նրան հաջորդում են «Արմենիա» եւ ԱԼՄ հեռուստաընկերությունները (26,2-ական %), Հ1-ը (24,3%):

Սակայն մոնիտորինգի թեմային նվիրված **լրատվական հեռուստանյութերի ֆանակական ցուցանիշով** առաջատարը «Արմենիա»-ն է (այդ հեռուստաալիքի ուսումնասիրված ամբողջ լրատվական նյութերի 33%-ը): Նրան հետեւում են Հ2-ը (26,8%), Հ1-ը (20,2%) եւ ԱԼՄ-ն (17,3%):

**2. Հեռուստաընկերությունների լրատվական լուսաբանման նշանայնությունը:** Առավել վառ արտահայտված նշանայնություն դրսևորվել է Հ2-ի եւ «Արմենիա»-ի հետազոտված լրատվական/լրատվական վերլուծական ծրագրերում: Սրանցում նշանային (մեծամասամբ դրական) հիշատակումները գերազանցում էին չեզոքներին: Ընդսմին, «ժամը» («Արմենիա» ՀԸ) միակն էր լրատվական ծրագրերից, որի լուսաբանումը ոչ մի անգամ բացասական բնույթ չի ունեցել: Հ1-ի եւ ԱԼՄ-ի լրատվական նյութերը մեծամասամբ մատուցվում էին կամ չեզոք կամ դրական համատեքստում: Բոլոր հեռուստաալիքներում նշանային հիշատակումները հանդիպում էին հիմնականում Սահմանադրության փոփոխությունների կողմնակիցների եւ հակառակորդների քարոզարշավների վերաբերյալ լրատվական նյութերում, որոնցում բերվում էին նրանց կարծիքները հանրաքվեի դրված նախագծի տարբեր դրույթների վերաբերյալ: Բացասականի փոքր բաժինը բացատրվում է ամենից առաջ նրանով, որ շատ դեպքերում նորացված Սահմանադրության հակառակորդների քարոզչական գործունեության լուսաբանումը չէր անդրադառնում միջոցառման բովանդակությանը, ինչի պատճառով համատեքստը ստացվում էր չեզոք:

**3. Մեկնաբանական հաղորդումներ:** Մոնիտորինգի ենթարկված մեկնաբանական հաղորդումներից «Արմենիա»-ն եւ Հ2-ը իրենց թողարկումների 80%-ը եւ Հ1-ը՝ բոլոր թողարկումները ամբողջությամբ նվիրել են սահմանադրական բարեփոխումներին: Այդ հաղորդումներում, իբրեւ կանոն, հյուր են եղել փոփոխությունների նախագծի կողմնակիցները կամ հակառակորդները, ինչը եւ պայմանավորել է դրանց բնույթը: Սակայն չեզոքների նկատմամբ նշանային հիշատակումների գերակշռության պայմաններում դեպի դրականը մեծ թեքում է նկատվում «Արմենիա»-ի («Իրականում») եւ Հ2-ի («Զորքորդ ստուդիա» եւ «Խոսքի իրավունք») հաղորդումներում: Ինչ վերաբերում է Հ1-ին, ապա նշանային հիշատակումների համարյա հավասարություն է նկատվում «Խաչմերուկ» ծրագրում, որը սկսեց հեռարձակվել հանրաքվեի քարոզարշավի ընթացքում: Հաղորդմանը, հերթագայությամբ, հյուր էին լինում Հիմնական օրեն-

քի փոփոխությունների կողմնակիցների եւ հակառակորդների ներկայացուցիչները: ՀՀ-ի մյուս հաղորդումը՝ «5-րդ անիվը», հիմնականում աշխատում էր «դեմ առ դեմ» ֆորմատով, այսինքն՝ մասնակիցներ էին լինում սահմանադրական փոփոխությունների եւ կողմնակիցները, եւ հակառակորդները, որոնք արտահայտում էին ինչպես դրական, այնպես էլ բացասական կարծիքներ, ինչը հաղորդմանը չեզոք բնույթ էր հաղորդում: Ի տարբերություն հիշյալ հեռուստաալիքների, ԱԼՄ-ի «Դիրքորոշում» եւ «Հարցի արժեքը» մեկնաբանական ծրագրերը Հայաստանի համար թիվ մեկ իրադարձությանն անդրադառնում էին «հրմբացս»: Հավանաբար, հեռուստաալիքի դիրքորոշումն այդպիսին էր, որովհետեւ այդ հաղորդումների վարողն ու անմիջական մասնակիցը ինքը՝ ԱԼՄ-ի սեփականատերն է: Սրանով հանդերձ, մասնակի հիշատակումների բնույթը կամ չեզոք էր, կամ՝ դրական:

**4. Լուսաբանումը տպագիր ՁԼՄ-ներում:** Մոնիտորինգի ենթարկված բոլոր թերթերից հանրաքվեին, ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծին եւ սրանց առնչվող այլ հարցերին ամենից շատ ուշադրություն է դարձրել «Հայկական ժամանակը» (այդ թերթի հետազոտված հրապարակումների ընդհանուր քանակի 31,2%-ը): Նրան հետեւում են «Հայոց աշխարհը» (26,9%), «Առավոտը» (26,5%), «Ռեսպուբլիկա Արմենիան» (21,3%), «Հայաստանի Հանրապետությունը» (17,9%), «Գոլոս Արմենիին» (11,5%), «Ազգը» (8,1%): Բոլոր հրատարակությունները բավականին մեծ հետաքրքրություն են ցուցաբերել թեմայի նկատմամբ: Ընդամենը, ամբողջովին սահմանադրական փոփոխություններին նվիրված հրապարակումների թիվը գերազանցել է այն հրապարակումների թվին, որոնցում դրանք մասնակիորեն են շոշափվել:

**5. Թերթային լուսաբանման նշանայնությունը:** «Հայաստանի Հանրապետություն» եւ «Ռեսպուբլիկա Արմենիա» պաշտոնաթերթերի հրապարակումներն ունեին միայն չեզոք կամ դրական համատեքստ (բացասական վերաբերմունք ոչ մի հրապարակման մեջ չի եղել): Նորացված Սահմանադրության կողմնակիցների գործունեությանը, կարծիքներին նվիրված հոդվածները հիմնականում դրական բնույթ ունեին, իսկ հակառակորդներին նվիրվածները՝ չեզոք:

«Հայկական ժամանակի» եւ «Հայոց աշխարհի» դիրքորոշումները շատ նման էին, սակայն հակադիր: Երկու թերթերում էլ չեզոք եւ նշանային հիշատակումների հարաբերակցությունը համարյա հավասար էր, սակայն վերջիններիս բնույթը՝ հակաբեւեռ. «Հայկական ժամանակում» գերակշռում էին բացասական, իսկ «Հայոց աշխարհում» դրական հիշատակումները: Սահմանադրության փոփոխությունների նախագծի առանձին դրույթների անդրադարձող հոդվածներում լինում էր քննադատություն («Հայկական ժամանակի» էջերում) եւ գովաբանում («Հայոց աշխարհում»). մասնավորապես, բացասական/դրական են եղել անդրադարձները իշխանության օրենսդիր եւ գործադիր թեւերի միջեւ լիազորությունների բաշխման, երկբաղաքացիության խնդիրներին: «Հայկական ժամանակն» ակտիվորեն է լուսաբանել նորացված Սահմանադրության հակառակորդների քարոզարշավն ու կարծիքները, «Հայոց աշխարհը»՝ դրա կողմնակիցների:

Ջուզահեռները նկատելի են նաեւ մյուս երկու՝ «Առավոտ» եւ «Գոլոս Արմենիի» թերթերի լուսաբանումներում: Երկու հրատարակություններում էլ չեզոք լուսաբանումների գերակշռության պայմաններում, նշանայինների հարաբերակցությունը համարյա միեւնույնն է, սակայն հակաբեւեռ. «Առավոտում» բացասականը համարյա չորս անգամ ավելի է, քան դրականը, իսկ «Գոլոս Արմենիի» թերթում դրականը ավելի քան չորս անգամ գերազանցում է բացասականին: Արմատապես տարբեր էր նաեւ հրապարակումներում սահմանադրական փոփոխությունների այս կամ այն խնդրի նկատմամբ վերաբերմունքը: Օրինակ, երկքաղաքացիության արգելքի վերացումը «Առավոտի» էջերում դիտարկվում էր իբրեւ նախագծի թերություններից մեկը, իսկ «Գոլոս Արմենիի» թերթում՝ իբրեւ նրա նվաճումը:

Սահմանադրության թեմային բոլորից քիչ անդրադարձել է «Ազգը», միակ հրատարակությունը, որտեղ դրական եւ բացասական հիշատակումները համարյա հավասար են, իսկ թերթի դիրքորոշումը կարելի է բնութագրել ընդհանուր առմամբ իբրեւ չեզոք:

**6. Տպագիր եւ հեռարձակվող ՁԼՄ-ներում սահմանադրական փոփոխություններին վերաբերող թեմաների լուսաբանումը:** Սահմանադրական փոփոխություններին անմիջականորեն առնչվող թեմաների հիշատակումների ցուցանիշով, մոնիտորինգի ենթարկված եւ հեռարձակվող, եւ տպագիր ՁԼՄ-ները իրենց լուսաբանումներում ուշադրությունը կենտրոնացնում էին ամենից առաջ հանրաքվեի կազմակերպման ու անցկացման եւ սահմանադրական փոփոխությունների այլ ընդհանուր հարցերի վրա: Այս երկու թեմաները մեծ առավելությամբ առաջատարներ են: Հեռուստաալիքներում հիշատակումների հաճախությամբ երկքաղաքացիությունն էր: Թերթերում այդ թեման ընդամենը 7-րդ տեղում էր, իսկ 3-րդում՝ ՀՀ քաղաքացիների իրավունքների ու ազատությունների թեման էր: Վերջինս հեռուստաթերթում 5-րդ տեղում էր: Հեռուստատեսությամբ մի քիչ ավելի է խոսվել ՀՀ նախագահի լիազորությունների մասին (հեռուստատեսություններում 4-րդ, թերթերում՝ 5-րդ տեղ), իսկ մամուլում Ազգային ժողովի լիազորությունների մասին (թերթերում 4-րդ, հեռուստատեսություններում՝ 6-րդ տեղ): Ընտրական իրավունքի եւ հանրաքվեների թեման, որ թերթերի էջերում հարյուրից ավելի հիշատակում էր ունեցել (6-րդ տեղ), եթերում անգամ տասը հիշատակում չունեցավ: Հեռարձակվող եւ տպագիր ՁԼՄ-ներում համարյա հավասար դիրք ունեն կառավարության իրավասությունների ու լիազորությունների, դատական իշխանության անկախության, տեղական ինքնակառավարման եւ Երեւանի կարգավիճակի թեմաները: Եվ հեռուստատեսություններում, եւ թերթերում «հետնապահներն» են դատախազության կարգավիճակի եւ լիազորությունների, տեղեկատվության եւ խոսքի ազատության բնագավառի, համայնքի ղեկավարի պաշտոնանկության թեմաները:

**7. ՁԼՄ-ների կողմնորոշումը:** Մոնիտորինգի ենթարկված բոլոր հեռուստաընկերությունները եւ յոթ թերթերից չորսը («Հայաստանի Հանրապետություն», «Ռեսպուբլիկա Արմենիա», «Հայոց աշխարհ», «Գոլոս Արմենիի») սպասվող հանրաքվեն եւ Սահմանադրության փոփոխությունները լուսաբանել են դեպի նախագծի կողմնակիցները հակումով: Խիստ քննադատական դիրքորոշում է

ունեցել «Հայկական ժամանակը», դեպի նախագծի հակառակորդներն է հակվել «Առավոտը»: «Ազգը» արտահայտված համակրանքներ եւ հակակրանքներ չի դրսևորել:

***Երեւանի մամուլի ակումբը շնորհակալություն է հայտնում Հայաստանի հանրային հեռուստատեսությանը, ԱԼՄ-ին, «Արմենիային», Հայկական երկրորդ հեռուստաալիքին մոնիթորինգի ընթացքում ցուցաբերած տեխնիկական աջակցության համար:***

## VIII. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Որոշելու համար, թե լսարանին որքան ադեկվատ եւ որակյալ էին դիտարկվող ՁԼՄ-ները ծանոթացնում Սահմանադրության փոփոխությունների բովանդակությանը, իրականացվել է փորձագիտական գնահատում:

Իբրեւ փորձագետ հանդես էր գալիս իրավաբան, «Ժողովրդավարություն» ՀԿ-ի նախագահ Վարդան Պողոսյանը:

ՁԼՄ-ների մոնիթորինգի (2005 թվականի նոյեմբերի 5-ից 25-ը) ընթացքում փորձագիտական գնահատման համար առանձնացվել են այն թերթային հրատարակումները եւ հեռուստանյութերը, որոնք պարունակել են Սահմանադրության փոփոխությունների նախագծի բովանդակային վերլուծություն, մեկնաբանություն, կամ՝ կարծիքներ:

Հաշվի առնելով, որ տպագիր մամուլը լսարանին ավելի լայն հնարավորություն է տալիս մանրամասնորեն ծանոթանալու հասարակական հնչեղություն ունեցող հարցերի՝ այդ թվում Սահմանադրության փոփոխությունների նախագծի բովանդակային վերլուծությունների հետ, փորձագիտական ուսումնասիրության ենթարկվեցին գլխավորապես թերթերի հրատարակումները:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հարցի էության չեզոք եւ խորը վերլուծություններ պարունակող հրատարակումները քիչ էին ու դրանց ազդեցությունն աննշան: Ստորեւ ներկայացվում են առավել տիպական հրատարակումները, որոնց կարելի է բաժանել երեք խմբի:

Առաջին խումբը կազմում են այն հրատարակումները, որոնք հիմնականում հայտարարություններ (երբեմն՝ հայտոյախառն) եւ պիտակավորումներ են պարունակում: Այդպիսի օրինակ է, մասնավորապես «Հայոց աշխարհ» օրաթերթում (11 նոյեմբերի, 2005թ.) տպագրված «Ինչու՞ է շահարկվում երկքաղաքացիության հարցը» հոդվածը: Այն բնավ չի անդրադառնում երկքաղաքացիության արգելքի վերացման հետ ծագող ռեալ խնդիրներին, այլ միայն հայտարարում է. «*Իրականում սա ՀՀԾ-ի ներկա դիրքորոշման մեջ գոյություն ունեցող «կրկնակի սահմանափակումները» ֆողարկելու... անհաջող փորձ է*»:

Նման մի հրապարակում է նաեւ «Հայկական ժամանակ» օրաթերթում (17 նոյեմբերի, 2005թ.) «Տխմարություն առանց սահմանի» խմբագրականը: Այս հոդվածում կան այսպիսի տողեր. «Այդ դեղինում բնական հարց է առաջանում. բա ինչի՞ համար է հանրափայլ (ընդ որում դարձադիր), ինչի՞ համար եմ հանրափայլ անում, որ համայնֆային բյուջեների փողերը մսխե՞մ, այ Վենեսիկյան ...» կամ «Եթե նախագծին նայում եմ որդես իրավական փաստաթուղթ, որն արժանացել է Վենեսիկյան եւ սեդական հաստատույթների հավանությանը...» եւ այլն:

Երկրորդ խումբը կազմում են այն հրապարակումները, որոնք բացահայտում են հեղինակների անհրազեկությունը կամ դիտավորյալ խեղաթյուրումը եւ ապատեղեկացնում ընթերցողին:

Այդպիսին է «Հայկական ժամանակում» տպագրված Աննա Մկրտչյանի «Զգուշացեք դավադրություն է» նյութը (25 նոյեմբերի, 2005թ.): Այստեղ թերեւս կա միայն մեկ ճիշտ պնդում, այն է, որ «խախտելով ընդունված կարգը՝ վարչախումբը «Սահմանադրության փոփոխություններ կատարելու մասին» նախագծով հանրափայլ է դրել ոչ միայն իր առաջարկությունները, այլեւ սահմանադրության փոփոխման չենթարկված նորմերը»: Հոդվածագիրն այնուհետեւ պնդում է, որ պետք է զգուշանալ, քանի որ նախագծում կա դավադրություն: Եվ հղում է կատարում այն հոդվածներին, որոնք դավադրություն չեն էլ կարող պարունակել: Սա ցույց է տալիս, որ հեղինակը չի ցանկացել կամ չի կարողացել ըմբռնել այդ փոփոխությունների բովանդակությունը: Բերենք երկու օրինակ. հոդվածագիրը հղում կատարելով նախագծի 6-րդ հոդվածին, ասում է, որ բացասաբար է գնահատում «Սահմանադրությանը հակասող ճանաչված օրենքները, ինչդեռ նաեւ սահմանադրությանը եւ օրենքներին հակասող ճանաչված այլ իրավական ակտերը իրավաբանական ուժ չունեն» դրույթը հանելու փաստը: Նա, սակայն, չի անդրադառնում դրա փոխարեն նախագծում ներառված դրույթներին, որոնք հստակ ամրագրում են իրավական նորմերի հիերարխիան: Հեղինակն անդրադարձել է նաեւ սեփականության անձեռնմխելիության իրավունքին՝ ասելով, թե «Հայաստանցիները չեն ունենալու սեփականության անձեռնմխելիության իրավունք»: Մինչդեռ Սահմանադրության փոփոխությունների նախագծի տեքստում հստակ ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում եւ երաշխավորվում է սեփականության իրավունքը (հոդված 8), ինչի տակ հասկացվում է նաեւ անձեռնմխելիությունը:

Անհրազեկության օրինակ է ՀՀ ԱԺ պատգամավոր Արմեն Աշոտյանի «Իշխանությունը պատկանում է ժողովրդին. եւ դա պետք է հասկանա երկրի յուրաքանչյուր քաղաքացի» հոդվածը («Ռեսպուբլիկա Արմենիա», 23 նոյեմբերի, 2005թ.): Այս հոդվածը վերաբերում է Սահմանադրության փոփոխությունների նախագծի 8-րդ գլխին: Հոդվածագիրը փաստորեն ներկայացնում է գործող Սահմանադրության տեքստը, բայց պնդում է, որ սրանք Սահմանադրության փոփոխությունների առավելություններն են: Ըստ էության Սահմանադրության 111-րդ հոդվածում բովանդակային փոփոխություն գրեթե չի կատարվել, պարզապես վերջին մասում միայն ճշգրտվել է, թե Ազգային ժողովը ինչ ժամկետում պետք է քննարկի հարցը, եթե Սահմանադրության փոփոխությունների նախաձեռնությամբ հանդես է գալիս Հանրապետության նախագահը: Բայց

հողվածագիրը սրանից եզրակացնում է, թե «նախագծում հսակ սահմանափակված են նախագահի եւ խորհրդարանի տարականություններն ու իրավասությունները»: Այնուհետեւ հեղինակը կատարում է հաջորդ ոչ ճիշտ պնդումը, թե «Խիս կարելու են համարում նախագծի այն դրույթը, որի համաձայն կարող են անցկացվել երկրի եւ ժողովրդի համար առավել կարելու օրինագծերի հանրափայլումներ»: Այս դրույթը նոր չէ: Այն կա գործող Սահմանադրությունում: Ընդ որում՝ խոսքը ամենակարեւոր հարցերի վերաբերյալ հանրաքվեի մասին չէ, այլ ցանկացած օրինագիծ հանրաքվեի դնելու մասին: Հեղինակը գրում է նաեւ, թե իր կարծիքով հատկապես կարելու նշանակություն ունի նախագծի 114-րդ հոդվածը, որտեղ ամրագրված է, որ Սահմանադրության 1-ին, 2-րդ եւ նույն՝ 114-րդ հոդվածները փոփոխության ենթակա չեն: Սա էլ գործող Սահմանադրության տեքստն է՝ առանց որեւէ ստորակետի փոփոխության:

Որեւէ լուրջ վերլուծություն չկա «Հայաստանի Հանրապետություն» թերթում տպագրված «Արդարադատության լուրջ երաշխիք» հոդվածում («ՀՀ», 23 նոյեմբերի, 2005թ.), որտեղ հեղինակ Գոհար Նուրիջանյանը, չնայած վերնագրին, գրեթե չի անդրադառնում արդարադատության խնդիրներին: Արվում են ընդհանուր դատողություններ, որոնք շատ դեպքերում տրամաբանական մտքի տեսակետից իրենց ավարտին հասցված չեն: Հոդվածում իշխանությունների բաժանման հարցն է բարձրացվում (նախագահ-խորհրդարան) եւ արվում է մի տարօրինակ պնդում, թե ներկայումս «երկրի նախագահ եւ քաղաքական մեծամասնություն հարաբերությունները» դեռեւս լուրջ քննարկման առարկա չինել չեն կարող, քանի որ քաղաքական կուսակցությունները հաճախ փոխում են իրենց դիրքորոշումները կամ որ «մեզանում գիշերը կարելի է որդես սոցիալիս կամ դեմոկրատիս ֆնել, իսկ առավոտյան աչքերը բացել որդես ֆրիսոնյա-ազգայնական»: Թե սա ինչ կապ ունի Ազգային ժողով - նախագահ փոխհարաբերությունների հետ, հեղինակն այդպես էլ չի պարզաբանում: Հոդվածի վերջում ասվում է. «Հաճախ է խոսվում, թե բարեփոխումների տարբերակը տարադրանք է վերոդրական ընթացիկին ինտեգրվելու ճանապարհին: Մասնագետների կարծիքով, որդես վերոդրական ընթացիկի անդամ, մենք ստանձնել ենք այս տարավորությունը...»: Ստացվում է, թե հողվածագիրն առանց մասնագետի կարծիքի չէր կարող գալ այն պարզունակ եզրահանգմանը, որ մենք ստանձնել ենք պարտավորություններ եւ պետք է կատարենք դրանք:

Հրապարակումների երրորդ խումբը նրանք են, որոնցում հեղինակները կամ հարցազրույցով տեսակետ արտահայտողները կատարում են Սահմանադրության փոփոխությունների նախագծի դրույթների վերլուծություն, սակայն եզրահանգումներն անում են ելնելով իրենց քաղաքական կամ այլ սուբյեկտիվ հայացքներից:

Այդպիսի հրապարակումներից է, օրինակ, «Հայաստանի Հանրապետությունում» հրապարակված «Գլխարկից մինչեւ տեղական իշխանավոր» («ՀՀ», 15 նոյեմբերի, 2005թ.) նյութը, որը վերաբերում է տեղական ինքնակառավարմանը, ավելի ստույգ՝ Սահմանադրության փոփոխությունների նախագծի 109-րդ հոդվածին, ըստ որի համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու համար, անհրաժեշտ է Սահմանադրական դատարանի համապատասխան եզրակա-

ցությունը: Հրապարակման հեղինակ Արամ Սարգսյանը այդ հոդվածի փոփոխությունից հանգել է բացառապես դրական եզրակացության, ինչն արդարացված չէ, քանի որ տեղական ինքնակառավարումը ժողովրդավարության առանձին եւ ինքնուրույն համակարգ է եւ չպետք է որեւէ կախվածության մեջ գտնվի գործադիրից:

«Ռեսպուբլիկա Արմենիա» թերթում տպագրված «Ժողովրդավարության խորացման, քաղաքացիական հասարակության ձեւավորման մեխանիզմը» (9 նոյեմբերի 2005թ.) հոդվածում, անդրադառնալով Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի ձեւավորման կարգում առաջարկված դրական փոփոխություններին, հեղինակ, Սահմանադրական իրավունքի փորձագետ Արամ Անանյանը միեւնույն ժամանակ չի նշում, որ այդ հանձնաժողովի կազմը անմիջապես չի փոփոխվելու, ինչպես դա պահանջում էր Եվրոպայի խորհուրդը:

«Ռեսպուբլիկա Արմենիա» թերթում ՀՀ ԱԺ պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռաֆիկ Պետրոսյանն իր «Դատական իշխանության անկախության երաշխիքները» վերնագրով հոդվածում («ՌԱ», 16 նոյեմբերի, 2005թ.) նշում է, թե իբր գործող Սահմանադրությամբ արդարադատության նախարարն է կազմում դատավորների առաջխաղացման ցուցակները կամ նրանց ենթարկում կարգապահական պատասխանատվության կամ դիմում երկրի ղեկավարին՝ դատավորի լիազորությունները վերացնելու համար: Հեղինակը պնդում է, թե այդ լիազորությունները՝ նախագծի փոփոխություններով, փոխանցվում են արդարադատության խորհրդին: Դրանք այսօր էլ արդարադատության խորհրդի լիազորություններն են, պարզապես այդ լիազորություններն արդարադատության խորհուրդն իրականացնում է արդարադատության նախարարի առաջարկով: Ըստ հեղինակի, դատավորների անկախությունը շատ ավելի երաշխավորված կլիներ, եթե նրանց պաշտոնանկության համար անհրաժեշտ լիներ նաեւ Ազգային ժողովի համաձայնությունը: Սա տեսակետ է, որը կարելի է ընդունել, բայց չպետք է կարծել, որ սրանից է կախված լինելու, ինչպես Ռաֆիկ Պետրոսյանն է նշում, «դատական համակարգի 100 տոկոսանոց անկախությունը»:

«Առավոտ» օրաթերթի (2005թ. նոյեմբերի 19-ի եւ 24-ի) համարներում հրապարակված են հարցազրույցներ քաղաքական վերլուծաբան Լեւոն Զուրաբյանի հետ: Ուսումնասիրված նյութերից սրանք թերեւս միակն են, որ լուրջ բովանդակային վերլուծություն են պարունակում: Նախ, պետք է ասել, որ Լեւոն Զուրաբյանը երկու հարցազրույցում էլ մի քանի արդարացի պնդումներ է կատարում: Առաջինում («Փորձում են Սահմանադրությամբ օրինականացնել խախտումները», «Առավոտ», 19 նոյեմբերի) նա կարծիք է հայտնում, որ օրենսդրական փոփոխություններ կատարելու տեխնիկայի տեսակետից Սահմանադրության փոփոխությունների նախագիծը բավականին անգրագետ է, որի հետ կարելի է համաձայնել: Երկրորդ պնդումն այն է, որ այն տեսքով, որով ներկայացված է նախագիծը, հնարավոր չէ պարզել, թե իրականում ինչն է փոփոխվել: Սովորական քաղաքացին, որը պարտադիր չէ, որ լինի սահմանադրական իրավունքի մասնագետ, անպայման պետք է վերցնի գործող Սահմանադրու-

թյան տեքստը, վերցնի փոփոխությունների նախագծի պաշտոնական տեղեկագիրը կամ հատուկ բուկլետը եւ իրար հետ համեմատի 117 հոդված, որպեսզի հասկանա, թե ինչ է փոփոխվում այս նախագծով: Սա նույնպես գործող օրենսդրության եւ մարդու իրավունքների կոպիտ խախտում է, որովհետեւ մարդուց պահանջում են կատարել այնպիսի աշխատանք, որը պետք է աներ Ազգային ժողովը: Այս առումով նրա գնահատականները տեղին են: Լեւոն Զուրաբյանը անդրադարձել է սեփականության օտարման վերաբերյալ դրույթին եւ երկքաղաքացիության մասին դրույթին: Եվ այստեղ էլ կարելի է համաձայնել, որ դրանք իսկապես գործող Սահմանադրության հետ համեմատ հետընթաց են: Այս երկու իրավունքների վերաբերյալ, վերլուծաբանը տվել է հիմնավորված բնորոշումներ:

Երկրորդ հարցազրույցում (*«Փոփոխությունների նախագիծը ճգնաժամահարույց է»*, *«Առավոտ»*, 24 նոյեմբերի, 2005թ.) անդրադարձ կա Սահմանադրության փոփոխությունների նախագծի 51-րդ, 52-րդ հոդվածներին, որոնք լուրջ թերություններ ունեն, որովհետեւ հստակ չեն ամրագրում այն ժամկետները, թե երբ պետք է անցկացվի հանրապետության նախագահի ընտրությունը, եթե քվեարկությունը չի ավարտվում թեկնածուներից մեկի հաղթանակով կամ եթե թեկնածուներից մեկը մահանում է: Այս հոդվածները, թերեւս, ունեն ճգնաժամեր առաջացնելու ներուժ: Դրանց վերաբերյալ Լեւոն Զուրաբյանի եզրահանգումները հիմնավորված են: Միեւնույն ժամանակ երկու հարցազրույցներում էլ կան չհիմնավորված եզրահանգումներ:

Այսպես, անդրադառնալով անձնական եւ ընտանեկան կյանքի պաշտպանության իրավունքին, որին վերաբերող հոդվածում միայն խմբագրական փոփոխություն է տեղի ունեցել, նա դա ներկայացնում է իբրեւ հետընթաց:

Կրոնի եւ համոզմունքների արտահայտման ազատությանը վերաբերող Սահմանադրության փոփոխությունների նախագծի 26-րդ հոդվածը գնահատելով, վերլուծաբանը անտեսում է, որ գործող Սահմանադրության 23-րդ հոդվածը վրիպակ ունի. այնտեղ ամրագրված է, որ կրոնի եւ համոզմունքների արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ Սահմանադրության 45-րդ հոդվածում նախատեսված հիմքերով: Սակայն, իրականում 45-րդ հոդվածում նման հիմքեր չկան: Այդ հղումը վերաբերում է 44-րդ հոդվածին: Նախագիծն ընդամենը ուղղել է վրիպակը:

«Փոփոխությունների նախագիծը ճգնաժամահարույց է» հոդվածը նույնպես ընդհանուր առմամբ արտացոլում է վերլուծաբանի խիստ քննադատական վերաբերմունքը նախագծի նկատմամբ: Հարցազրույցը վարողի հարցին, թե արդյոք ինքը իսկապես չի տեսնում, որ նախագիծն առավել հավասարակշռվածություն է ապահովում իշխանության ճյուղերի միջեւ, վերլուծաբանը պատասխանում է. *«Եկե՛ք վերլուծենք՝ արդյո՞ք այդպե՞ս է»* եւ բերում է նախագծի միայն բացասական կողմերը: Վերլուծաբանը չի ցանկանում անդրադառնալ նաեւ հավասարակշռությունն ապահովող դրույթներին եւ տպավորություն է ստեղծում, թե փոփոխությունների նախագիծն ամբողջությամբ ճգնաժամահարույց է:

Նկատի ունենալով վերոբերյալ օրինակները, ինչպես նաև Երեւանի մամուլի ակումբի մոնիտորինգի տվյալները, ըստ որի հրապարակումներում առավել շատ շոշափվել են սահմանադրական բարեփոխումների՝ ընդհանուր բնույթ կրող բաժիններ, կարելի փաստել, որ լրատվամիջոցները բավարար չեն իրազեկել հասարակությանը Սահմանադրության փոփոխությունների էությանը:

## IX. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի ՁԼՍ-ների մոնիտորինգը, որ իրականացվել է 2005 թվականի նոյեմբերի 5-ից 25-ը, ցույց տվեց, որ քանակական առումով հայկական թերթերը եւ հեռուստաընկերությունները բավարար ուշադրություն են դարձրել ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի հանրաքվեի թեմային: Միաժամանակ, հետազոտված ՁԼՍ-ների գերակշիռ մեծամասնությունն անտեսեց նման արշավները լուսաբանելու անկողմնակալության եւ բազմակարծության սկզբունքները: Չապահովվեց հասարակությանը սահմանադրական փոփոխությունների բովանդակության մասին բազմակողմանի, հավաստի եւ իրազեկ տեղեկություններ հաղորդելը:

Ասվածն ամենից առաջ վերաբերում է հայկական առաջատար հեռուստաալիքներին, որոնք այսօր երկրում հասարակական կարծիքի ձեւավորման առավել արդյունավետ եւ ազդեցիկ միջոցներն են: Թերթերն ավանդույթի համաձայն բաժանված էին հակամարտող ճամբարների եւ քարոզարշավը լուսաբանում էին սեփական քաղաքական կողմնորոշումներին համապատասխան: Սակայն Հայաստանում կարեւորագույն քաղաքական իրադարձությունների ժամանակաշրջաններում ԵՄԱ-ի անցկացրած ՁԼՍ-ների մոնիտորինգների (սկսած 1996 թվականից) ընթացքում սա երկրորդ անգամ է, երբ հեռուստաալիքները կողմնակալությամբ չզիջեցին տպագիր պարբերականներին: Առաջին անգամ նման իրավիճակ է եղել 1996 թվականին՝ պետական հեռուստաալիքների գերակայության պայմաններում, այն դեպքում, երբ ներկայումս Հայաստանում գործում են տասնյակ մասնավոր հեռուստաընկերություններ, իսկ պետական հեռարձակումը փոխարինված է հանրայինով:

Ընդ որում, եթե թերթերը որոշակիորեն հավասարակշռում էին իրար՝ պաշտպանելով տարբեր դիրքորոշումներ, իսկ միակ լրատվամիջոցը (հետազոտվածներից), որում Սահմանադրության փոփոխությունների նախագծին «կողմ» եւ «դեմ» կարծիքների հարաբերակցությունը համարյա հավասար էր՝ «Ազգ» թերթն էր, ապա բոլոր համազգային հեռուստաալիքները թույլ տվեցին նշանակալի շեղում հօգուտ մեկ՝ նախագծին աջակցության տեսակետի: Հեռարձակվող ՁԼՍ-ների կողմից նման լուսաբանումը ընդունված միջազգային չափանիշների խախտում է:

Հայաստանի պաշտոնական ՁԼՍ-ների (Հայաստանի հանրային հեռուստատեսության՝ Հ1-ալիքի, «Հայաստանի Հանրապետություն» եւ «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթերի) մոնիտորինգը ցույց տվեց, որ նրանք բոլորը կամ ընդհանրապես անբիռն չեն տրամադրել փոփոխությունների նախագծի հակառա-

կորդներին (թերթերի դեպքում), կամ՝ կողմնակիցներն առավելություն են ունեցել հակառակորդների նկատմամբ (Հ1-ի դեպքում): Վերջինս «Յեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի խախտում է: Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ Հ1-ի «Խաչմերուկ» ծրագիրը միակն էր հետազոտվածներից, որում փոփոխությունների նախագծի կողմնակիցներն ու հակառակորդները սեփական դիրքորոշումներն արտահայտելու հավասար հնարավորություններ են ստացել:

**Յ**անրաքվեի որակյալ լուսաբանումը դժվարանում էր մի շարք օբյեկտիվ պատճառներով: Մասնավորապես, սահմանադրական փոփոխություններն առնչվում էին սկզբունքային հարցերի լայն շրջանակի, եւ ՁԼՄ-ների համար ծայրահեղորեն դժվար էր դրանց բոլորին բավարար ուշադրություն դարձնել: Առավել եւս, որ իրավիճակը բարդանում էր ժամանակի սղությանբ. մինչեւ վերջին պահն էլ նախագծի տեքստում կատարվում էին էական փոփոխություններ, եւ դրա վերջնական տարբերակը հասարակությանը մատչելի դարձավ հանրաքվեից ընդամենը մեկուկես ամիս առաջ:

Սահմանադրության փոփոխությունների բովանդակության մասին հասարակությանը տեղեկացնելը բարդանում էր նաեւ նրանով, որ քննարկման համար առաջարկվում էր, որպես կանոն, ամբողջ նորացված տեքստը, որում ծայրահեղորեն դժվար էր տարբերակել փոփոխությունը հիմնական տարբերակից: Միայն փաստաթուղթը հիմնավորապես ուսումնասիրած մասնագետները կարող էին դատել փոփոխությունների նախագծի առավելությունների ու թերությունների մասին: Ի հետեւանք, մամուլում «կողմ» եւ «դեմ» փաստարկները կարող էին վերաբերել ինչպես գործող Սահմանադրության դրույթներին, այնպես էլ առաջարկվող փոփոխություններին: Այս հանգամանքը միայն չփոթեցնում էր քաղաքացիների մեծ մասին եւ խանգարում նրանց գիտակցված ընտրություն կատարել:

Օբյեկտիվ պատճառների թվին պետք է դասել նաեւ հանրաքվեների մասին ՀՀ օրենսդրության այն մասի անկատարությունը, որը վերաբերում է համապատասխան արշավների ժամանակ ՁԼՄ-ների գործունեության կարգավորմանը: Թեպետ անհրաժեշտ է նաեւ փաստել ՁԼՄ-ներում հօգուտ քաղաքական խնդիրների օրենքների պահանջները շրջանցելու ձեւավորվող պրակտիկան:

Քարոզարշավի լուսաբանման որակի վրա ազդեց նաեւ սահմանադրական փոփոխությունների շուրջ իրավիճակի չափից ավելի քաղաքականացումը: Քաղաքական ուժերի վարքը հանգեցրեց նրան, որ ողջ գործընթացում ուշադրությունը կենտրոնացվում էր ոչ այնքան փոփոխությունների բովանդակության, դրանց դրական կամ բացասական կողմերի վրա, որքան իշխանությունների եւ ընդդիմության հակամարտության: Պատահական չէ, որ բոլոր հետազոտված ՁԼՄ-ներից քարոզարշավի առավել ակտիվ լուսաբանմամբ աչքի ընկան արմատապես հակադիր քաղաքական դիրքորոշումներ ունեցող երկու թերթերը՝ «Հայկական ժամանակը» եւ «Հայոց աշխարհը», որոնց գործունեության մեջ լուսավորչական բաղադրատարրը ակնհայտորեն զիջում էր քարոզչականին:

Եվ ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ ՁԼՄ-ներում Սահմանադրության փոփոխությունների լուսաբանումներում հիմնական ուշադրությունը հատկացվում էր հանրաքվեի կազմակերպման եւ անցկացման հարցերին եւ ընդհանուր թեմաներին, այն դեպքում, երբ փոփոխությունների էությունը, դրանց հիմնական դրույթները հայտնվեցին երկրորդ պլանում: Այսպես, նվազագույնս լուսաբանվել են բարեփոխումների այնպիսի սկզբունքային խնդիրներ, ինչպես խոսքի եւ տեղեկատվության ազատության երաշխիքը, համայնքի ղեկավարի պաշտոնանկության խնդիրը, դատախազության կարգավիճակը եւ լիազորությունները:

Ընդ որում, բնութագրական է, որ փոփոխությունների էության եւ բովանդակության լուսաբանմանը որոշակի մակերեսային վերաբերմունք են դրսևորել հավասարապես եւ հեռարձակվող, եւ տպագիր ՁԼՄ-ները: Թեպետ պետք էր սպասել, որ թերթերն իրենց էությանը պետք է ցուցաբերեին առավել խորություն եւ վերլուծականություն, քան իրենց էլեկտրոնային գործընկերները:

**Մ**ոնիտորինգը թույլ է տալիս եզրակացնել Հայաստանում հրապարակային քաղաքականության մշակույթի ցածր մակարդակի մասին: Անգամ այն պայմաններում, երբ հետազոտված ՁԼՄ-ների մեծամասնությունը ցուցաբերեց որոշակի կողմնակալություն, միակողմանիություն, ակնհայտ էր, միաժամանակ, այն դժվարությունները, որոնց բախվում էին նրանք՝ փնտրելով գրուցակիցներ, որպեսզի հասարակությանը լավագույնս տեղեկացնեն սահմանադրական փոփոխությունների բովանդակությանը: Ձգացվում էր հանրաքվեի համատեքստում մարդկանց հետաքրքրող, հուզող հարցերի վերաբերյալ պատասխանատու, անաչառ, իրազեկ եւ անկաշկանդ խոսելու պատրաստ քաղաքական գործիչների, փորձագետների ակնհայտ պակաս:

Այս քաղաքական արշավի բնորոշ գիծը հարցազրույցից ընդդիմադիր քաղաքական գործիչների հրաժարվելուց որոշ ՁԼՄ-ների ներկայացուցիչների բողոքն էր: Մի շարք ՁԼՄ-ներ սրանով բացատրեցին փոփոխությունների նախագծի վերաբերյալ տարբեր տեսակետների ներկայացման դիսբալանսը: Այս փաստը եւս ինչ-որ չափով վկայում է հրապարակային քաղաքականության վերոհիշյալ հիմնախնդրի մասին: Սակայն գլխավոր պատճառը, հավանաբար, իշխանամետ ՁԼՄ-ների նկատմամբ ընդդիմության աճող անվստահությունն է, որն իր հերթին հետեւանք է այնպիսի նախադեպերի, երբ ընդդիմադիր գործիչների խոսքերը խեղաթյուրվել են, նրանց հարցազրույցների տեսագրությունները մոնտաժվել են, կամ հարցազրույց վարողները չափազանց կողմնակալություն են դրսևորել: Այս խնդրի խորացմանը նպաստում է նաեւ ուղիղ եթերում լրատվա-քաղաքական ծրագրերի պակասը:

**ՁԼՄ**-ներում Սահմանադրական փոփոխությունների լուսաբանման մոնիտորինգը մեկ անգամ եւս ընդգծեց Հայաստանի տեղեկատվական ոլորտի այն բացասական միտումները, որ վերջին երեք-չորս տարիներին նշում են Երեւանի մամուլի ակումբը, տեղական եւ միջազգային այլ հասարակական կազմակերպությունները: Դա նահանջն է բազմակարծությունից, իշխանությունների ուժեղացող վերահսկողությունը ամենից առաջ հեռուստատեսության վրա, հասարակության տեղեկատվական պահանջների անտեսումը, հասարակական-քաղաքական գործընթացներում ՁԼՄ-ների դերի նվազումը:



---

¶ð² ü Æ Ü° ð

---




**Սահմանադրության փոփոխությունների հիշատակումների բնույթը հեռուստահաղորդումներում (բացարձակ թվերով)**


- դրական
- բացասական
- չեզոք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ (ՀԻ)**

**Լրատվական եւ լրատվական-վերլուծական ծրագրեր («Հայլուր», «360 աստիճան»)**




**Մեկնաբանական հաղորդումներ («Խաչներուկ», «5-րդ անիվ»)**




**ԱԼՄ**

**Լրատվական եւ լրատվական-վերլուծական ծրագիր («Օրեցօր»)**



**Մեկնաբանական հաղորդումներ («Հարցի արժեքը», «Դիրքորոշում»)**





**Սահմանադրության փոփոխությունների հիշատակումների բնույթը հեռուստահաղորդումներում (բացարձակ թվերով)**

- դրական
- բացասական
- չեզոք

**«ԱՐՄԵՆԻԱ»**

Լրատվական եւ լրատվական-վերլուծական ծրագիր («Ժամը»)



Մեկնաբանական հաղորդում («Իրականում»)



**ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՄՏԱՎԱԼԻՔ (Հ2)**

Լրատվական եւ լրատվական-վերլուծական ծրագրեր («Լրաբեր», «Կիրակնօրյա լրաբեր»)


Մեկնաբանական հաղորդումներ («Չորրորդ ստուղիա», «Խոսքի իրավունք»)




**Սահմանադրության փոփոխությունների հիշատակումների բնույթը թերթերում (բացարձակ թվերով)**

- դրական
- բացասական
- չեզոք

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»**




**«ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱ ԱՐՄԵՆԻԱ»**




Սահմանադրության փոփոխությունների հիշատակումների բնույթը թերթերում (բացարձակ թվերով)

- դրական
- բացասական
- չեզոք

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»




«ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ»




Սահմանադրության փոփոխությունների հիշատակումների  
բնույթը թերթերում (բացարձակ թվերով)

- դրական
- բացասական
- չեզոք

«ԱՌԱՎՈՏ»




«ԳՈՒԼՈՍ ԱՐՄԵՆԻ»




**Սահմանադրության փոփոխությունների հիշատակումների բնույթը թերթերում (բացարձակ թվերով)**

- դրական
- բացասական
- չեզոք

**«ԱԶԳ»**




**Սահմանադրության փոփոխություններին առնչվող թեմաների հիշատակումների հաճախականությունը (բացարձակ թվերով) Հայաստանի հանրային հեռուստատեսություն (Հ1), ԱԼՄ, «Արմենիա», Հայկական երկրորդ հեռուստաալիք (Հ2) հեռուստաընկերություններում**



**ՀՀ Սահմանադրության փոփոխություններին առնչվող թեմաների ցանկը**

1. Մարդու եւ քաղաքացու իրավունքներ ու ազատություններ
2. ՀՀ նախագահի լիազորություններ
3. ՀՀ Ազգային ժողովի լիազորություններ
4. ՀՀ կառավարության իրավասություններ եւ լիազորություններ
5. ՀՀ դատական իշխանության անկախություն
6. ՀՀ դատախազության կարգավիճակ եւ իրավասություններ
7. Տեղական ինքնակառավարում
8. Համայնքի ղեկավարի պաշտոնանկության խնդիրը
9. Երեւանի կարգավիճակը
10. Տեղեկատվության եւ խոսքի ազատության բնագավառ
11. Երկքաղաքացիություն
12. Ընտրական իրավունք եւ հանրաքվեներ
13. Սահմանադրական կարգի հիմունքներ եւ այլ ընդհանուր հարցեր
14. Նոյեմբերի 27-ի հանրաքվեի կազմակերպմանն ու անցկացմանն առնչվող հարցեր

**Սահմանադրության փոփոխություններին առնչվող թեմաների հիշատակումների հաճախականությունը (բացարձակ թվերով) «Հայաստանի Հանրապետություն», «Ռեսպուբլիկա Արմենիա», «Ազգ», «Առավոտ», «Հայկական ժամանակ», «Հայոց աշխարհ», «Գոլոս Արմենիի» թերթերում**



**ՀՀ Սահմանադրության փոփոխություններին առնչվող թեմաների ցանկը**

1. Սարդու եւ քաղաքացու իրավունքներ ու ազատություններ
2. ՀՀ նախագահի լիազորություններ
3. ՀՀ Ազգային ժողովի լիազորություններ
4. ՀՀ կառավարության իրավասություններ եւ լիազորություններ
5. ՀՀ դատական իշխանության անկախություն
6. ՀՀ դատախազության կարգավիճակ եւ իրավասություններ
7. Տեղական ինքնակառավարում
8. Համայնքի ղեկավարի պաշտոնանկության խնդիրը
9. Երեւանի կարգավիճակը
10. Տեղեկատվության եւ խոսքի ազատության բնագավառ
11. Երկքաղաքացիություն
12. Ընտրական իրավունք եւ հանրաքվեներ
13. Սահմանադրական կարգի հիմունքներ եւ այլ ընդհանուր հարցեր
14. Նոյեմբերի 27-ի հանրաքվեի կազմակերպմանն ու անցկացմանն առնչվող հարցեր